№ 205 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 17 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ

1914
ՔԱՌԱՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 17 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ № 205

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 ռուբլի. ամսական 85 կոպ.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Соломоновская ул., № 21.
Tiflis, Rédaction „Mschak“
Խմբագրատան տելեֆոն № 2—53.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզվով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20—10 կոպ.
Տպարանի տելեֆոն № 67.

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
Соломоновская ул., № 21.
TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 4 ՌՈՒԲ.

Բաժանորդագրվել կարելի է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած:

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամականիշ: ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ:

Յայտարարութիւնների համար պէտք վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.:

1914 թւի տարեկան բաժանորդները, որոնք առ 1-ն յունվարի 1915 թ. լրիւ վճարած կլինեն բաժանորդավճար 10 ռուբլին, ՁՐԻԱԲԱՐ կը ստանան հետևեալ 2 գրքերից մէկն ու մէկը. «ԴՐ. ԱՐԾՐՈՒՆՈՒ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ 1865—1871 Թ.», «ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐ» Վ. Քէնի:

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿ. ԽՈՐՀՈՒՐԴԸ
սեփական շինութեան մէջ
վիրաւոր զինւորների համար բանալով
ՀԻՒԱՆԴԱՆՈՑ ՅԻՍՈՒՆ ՄԱՀՃԱԿԱԼՈՎ
խոնարհաբար խնդրում է բոլոր սրտացաւ անձանց արձագանք տալ այդ բարի գործին և օգնել Խորհրդին նուիրաբերութիւններով դրամով, սպիտակեղէնով, կահ-կարասիքով և մթերքներով: Ամեն մի հիւանդի պահելը արժէ ամսական 36 ռուբ.: Խորհուրդը շնորհակալութեամբ ընդունում է յանձնարարութիւն՝ պահել հիւանդներ նուիրատուի անունով:
Խորհուրդը սրա հետ միասին խնդրում է այն անձանց, որոնք կը ցանկանան ծառայել հիւանդանոցում գթութեան քրոջ, հիւանդապահի և այլ պաշտօններով, բարեհաճել գալ Ընկ. գրասենեակը գրվելու համար (Абасъ-Абадская пл. № 7 с. д.):
(օ. մ.) առ. 881. 6—1

ՇՈԳԵՆԱՒԱՅԻՆ ԵՒ ԱՌԵՒՏ. ՌՈՒՍ. ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ
Русское Общество Пароходства и Торговли
սրանով յայտնում է, որ ՇՈԳԵՆԱՒԱՅԻՆ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆԸ Սև և Ազովեան ծովերով, նոյնպէս և մինչև Կ. Պոլիս—ԿԱՏԱՐՎՈՒՄ Է ԿԱՆՈՆԱՒՈՐ:
Սեպտեմբերի 6-ից վերականգնված է ապրանքատար ուղղակի հաղորդակցութիւնը Բաթումի վրայով: Գործակալ՝ Ս. Խ. ՍՈՒԼԽԱՆԵԱՆ
առ. 880. 1—1

ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԸՆԿ. ԽՈՐՀՈՒՐԴԸ
յայտնում է ի գիտութիւն Ընկերութեան պ. պ. անդամների, որ կիրակի, սեպտեմբերի 21-ին, երեկոյեան ժամը 7-ին, Կ. Հ. Բ. Ընկ. դահլիճում (Աբաս-Աբադեան հրապ., № 7)
ՆՇԱՆԱԿՎԱԾ Է
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ
Օրակարգի խնդիրներն են.
1) Ընտրութիւն Ընկերութեան նոր անդամների:
2) Խորհրդի զեկուցումը միջնորդ դատարանի որոշման մասին և դրա հետ կապված խորհրդի անդամների ընտրութիւն:
3) Ընտրութիւն Մրցանակաբաշխութեան յանձնաժողովի 7 անդամի և 3 փոխանդամի:
4) Ընթացիկ հարցեր: առ. (Կ.) 879. 2—1

Մարիամեան-Յովնանեան Օրիորդաց Դպրոցի
ՉՔԱՒՈՐ ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻՆԵՐԻՆ ՆՊԱՍՏՈՂ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ անդամները հրաւիրվում են դպրոց՝ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ կիրակի օրը, ամսիս 21-ին, առաւօտեան ժամը 11½-ին 1914—1915 ուսումն. տարվայ նախահաշիւը վերաքննելու համար:
(Հ.) առ. 878. 2—1

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՈՒՆ
(ԶՈՒԲԱԼՕՎԻ ԱՆՈՒԱՆ)

Այսօր, չորեքշաբթի, սեպտեմբերի 17-ին
◆ ՍԵԶՕՆԻ ԲԱՑՄԱՆ ԱՌԻԹՈՎ ◆
ՀԱՅԿ. ԴՐԱՄ. ԽՄԲԱԿՑ.
Մասնակց. դերասանուհիների կը ներկայացնէ առաջին անգամ Ժողովրդական Տան բեմի վրա—
ՇԻՐՎԱՆԶԱԴԷԻ
ԱՒԵՐԱԿՆԵՐԻ ՎՐԱ
Դրամա 4 արար. և 5 պատկերով:
ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ.—տ. տ. Արաքսեան, Մանուչարեան, Ցամիկ, Սաթենիկ, օր. Արծւիկ, պ. պ. Բէգիջանեան, Գալբօշ, Երամեան, Թ. Թօրոսեան, Ա. Ղանալօզեան, Միքայէլեան և Ռուսեան:
Սկիզբը երեկ. ժամը 8½-ին:
Տեղերի գները 50—5 կ.:
Ռեժիսսոր՝ ԱՄՕ-ԽԱՐԱԶԵԱՆ
Վարչութեան հերթապահ անդամներ՝
Ս. ԳԱԼՍՏԵԱՆ և Ա. ԷԼԻԶԲԱՐԵԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐԻ ԱՄԲՈՂՋ ՀԱՍՈՅԹԻ 3%-Ը ՅԱՏԿԱՑՎԱԾ Է ՊԱՀԵՍՏԻ ԶԻՆՈՒՈՐՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՕԳՏԻՆ:
877. 1—1

ԲԺՇԿԱՊԵՏ
Մ. Յ. ՄՈՒՐԱԴԵԱՆ
նախկին օրդինատ. Մոսկվայի համալսարանի և ասիստենտ Բերլինի համալսարանի պրոֆ. Պօզնէրի:
Ընդունում է հիւանդներին միզասեռական, սիֆիլիսի և կաշուի հիւանդութիւններով՝ առ. ժ. 10—12, երեկ. ժ. 4—6: Սօլօլակ, Ռախշեևսկայա փող. սեփ. տուն, № 1, հրձիգաշէջների բնակատեղիի դիմացը, տելեֆոն 10—58.
(Հ. ա. Կ.) առ. 875. 50—2

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Ս. Գ. ԿԷՕՆՃԵԱՆ
վերադառնալով վերսկսեց հիւանդների ընդունելութիւնը. պլոմբ, արհեստական ատամներ, ատամի հեռացումը առանց ցաւի:
Ընդունելութիւնը ամենայն օր.
Առաւ. 9—2 ժ.
Երեկ. 4—7 ժ.
Կիրակի օրերը 10—12.
Լերմոնտովսկայա փողոց № 1. մուտքը նրբափողոցից:
առ. (ա. օ.) 804. 0—16

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Գ. Յ. ԳԱՐԱԿԻՒԼԵԱՆ
վերադառնալով արտասահմանից վերսկսեց հիւանդների ընդունելութիւնը՝ առ. ժամը 9—2 և երեկ. ժ. 5—7:
Վելեամինովսկայա փող. № 4.
(ա. օ.) առ. 871. 0—3

ՄԵՐ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՆԵԼԻՔԸ

II

Անցեալ անգամ մենք ցոյց տուինք, թէ ներկայումս ինչպիսի պայմաններ են դասաւորված, որոնք կարող են պատերազմ առաջ բերել Թիւրքիայի և Ռուսաստանի միջև, և հարցրինք, թէ որն է լինելու մեր պարտականութիւնը և անելիքը այդ դէպքում:

Հայ ժողովուրդը (մեր խօսքը Ռուսաստանի հայ ժողովրդի մասին է) երկու տեսակէտով շահագրգռված է ներկայ պատերազմով. Նախ, իբրև քաղաքացի, իբրև անդամ մի կուլտուրական ազգի, նա համակված է խորին համակրութեամբ դէպի ռուսական զէնքի և գործի յաղթութիւնը, որովհետև այդ զէնքը բարձրացել է ի պաշտպանութիւն տկարների. երկրորդ, որովհետև ռուսական զէնքի և գործի յաղթութիւնը անդրադառնալու է իր եղբայրակից Թիւրքահայերի ազատութեան վրա. վերջին նկատումը ուրեմն աւելի շօշափելի և հրատապ է դառնում, երբ Թիւրքիան պատերազմ յայտարարէ Ռուսաստանին և վերջինս ստիպված լինի մանել Թիւրքահայաստան:

Ուրեմն իբրև քաղաքացի և իբրև ազգասէր, ռուսահայի ամբողջ համակրութիւնը և անկեղծ սէրը ռուսական զէնքի աջողութեան և յաղթութեան կողմն է: Եւ ռուսահայը արդէն ցոյց է տուել և տալիս է ոչ միայն խօսքով, այլ և գործով այդ համակրութիւնը և սէրը, մասնակցելով իբրև զինւոր համաեւրոպական պատերազմին, հիմնելով հիւանդանոցներ, մատակարարելով նիւթական օգնութիւն, խնամելով վիրաւորներին և այլն:

Իսկ Թիւրքիայի հետ պատերազմ ծագելու դէպքո՞ւմ:

Այդ դէպքում միթէ տարակոյս կայ, որ ռուսահայերի համակրութիւնը և սէրը ռուսական զէնքի աջողութեան և յաղթութեան համար աւելի մեծ եռանդով և թափով պէտք է արտայայտվի, և այդտեղ նրանք պէտք է չը բաւականանան միայն հիւանդանոցներ հիմնելով, վիրաւորներին խնամելով, այլ և, բացի զօրքի մէջ իբրև զինւորներ գործելուց, պէտք է մասնակցեն պատերազմին և իբրև կամաւորներ, որոնք, ինչպէս յաճախ տեսնված է պատմութեան մէջ, առաջ են գալիս ամեն անգամ, երբ մէկը սուրը հանում է պատեանից մի արդար և սուրբ դատի պաշտպանութեան համար:

Գալով Թիւրքահայերին, մենք մեզ իրաւունք չենք համարում խօսել նրանց անունից: Որքան էլ à priori և ըստ պատմական փորձառութեան համոզված պէտք է լինենք, որ Թիւրքահայ ժողովուրդը, իբրև դարերով ճնշված, հարստահարված մի տարր, ենթակայ Թիւրքական սարկացուցիչ ազդեցութեան, իր սրտի խորքում միշտ համարել է Ռուսաստանը իբրև իր միակ ազատարարը, բայց ներկայումս մենք չը պէտք է որևէ յոյս և ակնկալութիւն դնենք նրա վրա, ի նկատի ունենալով նրա անտանելի դրութիւնը: Այդ՝ մի կողմից. միւս կողմից՝ մենք լաւ ծանօթ չենք Թիւրքահայ մտաւորականութեան կամ ինտելիգենցիայի հոգեբանութեան հետ. մենք գիտենք, որ Թիւրքահայ մտաւորականութիւնը, գէթ նրա մի մասը և մի քանի քաղաքական-յեղափոխական կուսակցութիւններ, որոնք առաջ թշնամաբար էին տրամադրված դէպի Թիւրքաց կառավարութիւնը, 1908 թւի յեղաշրջումից յետոյ սկսեցին այլ կերպ վերաբերվել այդ կառավարութեան և քարոզել «օսմանեան հայրենասիրութիւն» ու դաշնակցել ջէօն թիւրքերի հետ: Դեռ 2—3 ամիս առաջ, «Դաշնակցութեան» օրգան «Դրօշակը» տպեց մի յօդուած ընդդէմ ռուսական քաղաքականութեան և կառավարութեան հայկական րէֆօրմների ծրագրի առիթով, բայց այժմ, երբ ծագել է համաեւրոպական պատերազմ, նա թեքվել է դէպի ռուսասիրութիւն, որը մենք բոլոր սրտով ողջունում ենք, իբրև խոստովանութիւն և զղջումն այդ կուսակցութեան կողմից, որ նրա հակառուսական ուղղութիւնը միանգամայն սխալ և դատապարտելի էր:

Մենք կարծում ենք, որ մեր՝ ռուսահայերիս միակ անելիքը և ցոյց տալիք օգնութիւնը Թիւրքահայ ժողովրդին՝ կը լինէր օգնել նրան ինքնապաշտպանութեան համար միջոցներ ունենալ, որովհետև հանրածանօթ իրողութիւն է, որ երբ Թիւրքիան պատերազմ յայտարարէ Ռուսաստանին, ֆանատիկոս թիւրք և քիւրդ ամբոխը իր ալան-թալանի և ջարդի ասպարէզ է դարձնելու հայ ժողովուրդը, իբրև կրօնակից ռուսի:

Ուրեմն մեր ռուսահայերի պարտականութիւնն է, բացի կամաւոր զինւորներից, որ իբրև քաղաքացի տալիս ենք, օգնել ռուսական զէնքին և իբրև կամաւորներ, իսկ Թիւրքահայերին տալ միջոց՝ ինքնապաշտպանութեան համար քիւրդ, չերքէզ հրոսակների դէմ:

Հ. Առաքելեան

ՀԱՄԱԵՒՐՈՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

ՌՈՒՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ՌՈՒՍ-ԱՒՍՏՐԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

16 սեպտեմբերի

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Պաշտօնական: Սեպտեմբ. 15-ին. Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից. «Աւգուստովի անտառներում մեր զօրքերը կռւով աջողութեամբ առաջ են գնում: Օսօվցայի մօտ սկսված թնդանօթաձգութիւնը կատարվում է ծանր թնդանօթներից: Սեպտ. 14-ի վաղ առաւօտից այստեղ թնդանօթաձգութիւնը սաստկացաւ: Գերմանացիք փորձեցին մօտենալ բերդին, բայց վանվեցին: Թշնամին Սիլէզի զօրաձակատում կենտրոնացրել է խոշոր ույժեր և ցոյց է տալիս մեծ գործունէութիւն:

«Պերեմիշլից բերդապահ զօրքերը փորձում են աննկատելի կերպով յարձակումներ գործել մեր զօրքերի վրա, սակայն անաջող:

«Աւստրիացիների նահանջի ժամանակ մենք ձեռք ենք ձգում գերիների, թնդանօթներ և ռազմամթերք:

«Սանօկ-Լիսկօ շրջանը գրաւվեց. մեր զօրքերը փախուստի դարձրին թշնամուն:

«Ռիաշեվից դէպի հարաւ մի բաւեն հեծելազօր գերեց 25-րդ գնդի զինւորներից մի քանիսին:

«Օսօվցայի մօտ գերմանացիք վարում են միայն պաշտպանողական կռիւ: Աւգուստովի լեռներում մենք բաւականին առաջացել ենք:

«Պարզվեց, որ մեր սահմանում գործող գերմանական պահեստի զօրաբանակի հրամանատար նշանակվել է գեներալ ֆօն-Գալվիցը»:

ՖՐԱՆՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ԱՆԳԼՕ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

16 սեպտեմբերի

ՓԱՐԻԶ.—Սեպտ. 14-ի երեկ. ժամը 11-ին հրատարակվեց հետևեալ պաշտօնական հաղորդագրութիւնը. «Սեպտ. 13-ի գիշերից մինչև սեպտ. 14-ը գերմանացիք ամբողջ զօրաձակատում դիմեցին անսովոր խիզախ յարձակումների: Գործողութիւնների ընդհանուր ծրագիրը ցոյց է տալիս, որ կարգադրութիւն է տացված ձեռք բերել վճռական հետևանք, սակայն այդ ոչ միայն չաջողվեց թշնամուն, այլ, ընդհակառակն, այդ կռիւների ժամանակ մենք վերցրինք մի դրօշակ, թնդանօթներ ու շատ գերիներ: Բոլոր զօրահրամանատարները վկայում են, որ, չը նայած անդադար կռւից առաջ եկած ծայրահեղ յոգնածութեան, զօրքի ոգևորութիւնը շատ լաւ է: Զօրահրամանատարները հազիւ են զսպում զօրքերին, որոնք կամենում են նետվել թշնամու դէմ»:

ԱՒՍՏՐՕ-ՍԵՐԲԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

15—16 սեպտեմբերի

ԲԵԼԳՐԱԴ.—Սեպտ. 14-ի երեկոյեան և 15-ի առաւօտ աւստրիական մօնիտօրները ռմբակոծեցին քաղաքը և փչացրին շատ շինութիւններ: Անցեալ գիշեր ուժեղ հրացանաձգութիւն էր սերբերի և թշնամու առաջապահ զօրախմբերի միջև Սավայի ձախ ափին: Սերբերը հարկադրեցին թշնամուն նահանջել: Լուրերի համաձայն, թշնամին քանդել է Զէմլինի երկաթուղին:

ԲԵԼԳՐԱԴ.—Լոյս սեպտ. 15-ի գիշերը Բելգրադի մօտերը, Սավայի ձախ ափին, մինչև արշալոյսը տեղի էր ունենում ուժեղ կռիւ մասնակցութեամբ թնդանօթաձիգ վաշտերի: Արիաբար արշաւող սերբիական զօրքերը ցիրուցան արին թշնամուն և գրաւեցին Զէմլինի գլխաւորագոյն դիրքերը: Թշնամու նահանջը կրում էր փախուստի բնաւորութիւն: Սերբ մարտկոցների և մօնիտօրների միջև արտիլերիական կռիւը շարունակվում է:

ՆԻՇ.—Բոլոր սերբ զօրապետների տեղեկութիւններից երևում է, որ ամբողջ զօրաձակատում թշնամին գործ է ածում պայթուցիկ գնդակներ: Բոլոր աւստրիացի զինւորները ունեն մօտները 20% պայթուցիկ նիւթեր: Նրանց խստագոյնս կարգադրված է ամեն կերպ անել, որպէսզի այդ գնդակները չընկնեն սերբերի ձեռքը:

Զէմլինի աւստրիական զօրքերի հրամանատար Գօլեան սեպտ. 9-ին յատուկ գրութեամբ պահանջեց յանձնել Բելգրադը: Միաժամանակ Գօլեան մի հրաման արձակեց զօրքերի անունով, որի մէջ կշտամբում է զինւորների թուլամորթութիւնը, օֆիցէրների անշնորհքութիւնը, ընդհանրապէս զօրքերի շփոթութիւնը, որի ժամանակ աւստրիացիք կրակում են նոյն իսկ իրար վրա:

ՊԱՏԵՐԱԶՄ ՀԵՌԱՒՈՐ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

15—16 սեպտեմբերի

ՉԻՖՈՒ.—Անգլօ-ճապօնական առաջապահ զօրամասերը գտնվում են Ցինդաօյից 20 վերստ հեռաւորութեան վրա: Ճապօնացիք աջողութեամբ ռումբ են նետում աէրօպլաններից:

ՊԵԿԻՆ.—Չինական կառավարութիւնը ճապօնական դեսպանին բողոքեց Վէյսեան կայարանը ճապօնական զօրքերով գրաւելու դէմ, որովհետև այդ կայարանը գտնվում է պատերազմական գործողութիւնների շրջանից դուրս:

ՀԱՄԱԵՒՐՈՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)

15 սեպտեմբերի

ՓԱՐԻԶ.—Պաշտօնապէս հաղորդվում է, որ 298-րդ պահեստի գնդին շնորհվեց Պատուաւոր Լէգէօնի շքանշան պրուսական 36-րդ գնդի դրօշակը խլելու համար:

Պատուաւոր Լէգէօնի շքանշան տրվեց պօդպօրուչիկ Դէլկասէին, որ վիրաւորվելով մեծ արիութիւն ցոյց տուեց կռւում:

Գերմանիան պաշտօնապէս տեղեկացրեց մի քանի երկիրների կառավարութիւններին, թէ իբր ռմբակոծելով Րէյմսի տաճարը, գերմանացիք նպատակ ունէին ոչնչացնել աստղադիտարանը: Սակայն այդ հերքվում է ֆրանսիական զօրքերի ընդհանուր հրամանատարից, որ աւելացնում է, թէ գերմանացիք ռմբակոծութեան ժամանակ կրակն ուղղեցին և հիւանդանոցի վրա, ուր երեք վիրաւոր սպանվեցին, իսկ երկու սպասուհի վիրաւորվեցին:

Ֆրանսիան որոշեց անվաւեր ճանաչել բոլոր այն պայմանագրերը, որ կապել են ֆրանսիացիք և գերմանացիք պատերազմի յայտարարութիւնից յետոյ:

ԿՈՊԵՆՀԱԳԵՆ.—Մօտիկ ապագայում Գերմանիայից մեկնելու են 6100 ռուսներ:

ՀՌՈՄ.—Գեղարուեստի, գիտական ու կուլտուրական հաստատութիւնների ներկայացուցիչների ժողովը հանդիսաւոր նիստում բողոք յայտնեց Լուվէնի, Մալինի և Րէյմսի գեղարուեստի սրբազան յիշատակարանները գերմանացիների ձեռքով բարբարոսաբար ոչնչացնելու դէմ:

ԲԵԼԳՐԱԴ.—Եկաւ Պետր թագաւորը և դիտեց թագաւորական պալատի քանդված մասերն ու զանազան թաղեր: Ժողովուրդը բուռն կերպով ողջունեց թագաւորին, որ յետոյ մեկնեց Տօպօլա:

ՀՌՈՄ.—Տրիէնտից հաղորդում են, որ այն պահեստի իտալացիք, որոնք զէնքի կանչվեցին անցեալ ամիս երկաթուղիների պաշտպանութեան համար, անակնկալ կերպով սեպտ. 14-ին ուղարկվեցին պատերազմաբեմը: Օրէնքով նրանց պէտք չէր ուղարկել նահանգի սահմաններից դուրս, բայց Ֆրանց-Յօզէֆ կայսրը հրաման հրատարակեց, որի մէջ ազդարարված է, թէ՝ նկատի առնելով զօրքի հերոսական ոգին, նա թոյլ է տալիս նոյն իսկ պահեստիներին պատիւ ունենալ կռւելու ի պաշտպանութիւն հայրենիքի: Օֆիցէրները յայտարարում են այդ հրամանը զօրանոցներում, բայց գիտակցում են, որ այդ հանդիսանում է Աւստրօ-Ունգարիայի վերջին ջանքը:

ԿԻԵՎ.—Լվովում հրատարակվող «Прикарпатская Русь» թերթում, սեպտ. 12-ի համարում, տպված է Բարձրագոյն հետևեալ հեռագիրը.

Լվով, Գալիցիայի գեն.-նահանգապետին: Հաղորդեցէք Գալիցիայի ռուս կազմակերպութիւնների պատգամաւորութիւններին, որոնք ներկայացան ձեզ սիրով ու հպատակութեան արտայայտութեամբ, Իմ սրտագին շնորհակալութիւնը և Իմ ողջոյնը բազմաչարչար ռուս ժողովրդին, Ամբողջ Ռուսաստանը Ինձ հետ ուրախանում է, որ Ռուսաստանին միացաւ ամեն մի ռուսին թանկագին Չերվոննայա Ռուսը: Ձեզ անձամբ ցանկանում եմ լիակատար աջողութիւն: ՆԻԿՈԼԱՅ.

Ցիշեալ հեռագիրը պատասխան եղաւ սեպտ. 9-ին Գալիցիայի գեներալ-նահանգապետ կոմս Բոբրինսկիից ստացված հետեւեալ հեռագրի.

«Բաղդաւոր եմ տեղեկացնել Ձերդ Մեծութեանը, որ այսօր ինձ ներկայացան Գալիցիայի 12 ռուսական կուլտուրական-կրթական և տնտեսական կազմակերպութիւնների պատգամաւորութիւնները և գալիցիական-ռուս ժողովրդի անունից խնդրեցին ինձ առ ոտս Ցարի արկանել ամենահաւատարիմ զգացմունքներ, որդիական սէր և շնորհակալութիւն ռուսաց Սպիտակ Ցարին, որ ազատեց Չերվօննայա Ռուսը դարաւոր ստրկութիւնից և միացրեց նրան մայր Ռուսաստանի հետ։ Կոմս Բոբրինսկի»։

Թագաւոր Կայսրին բաղդ ունեցան ներկայանալ Պետրօգրադի առեւտրական բանկերի ներկայացուցիչները։ Թագաւորը բարեհաճեց ընդունել նրանց Ցարսկոյէ Սէլօյի Ալէքսանդրեան պալատում։ Բանկերի ներկայացուցիչները հրաւիրվեցին Փոքր գրադարանը, ուր գտնվում էին Թագաւոր Կայսրը և Կայսրուհի Ալէքսանդրա Ֆէօդորօվնան։ Պետրօգրադի փոխատու պեղչային բանկի վարչութեան նախագահ Ուտինը բաղդ ունեցաւ զեկուցել Կայսրին, որ Պետրօգրադի բանկերը ժողովել են մի միլիօն րուբլի Նորին Մեծութեան տրամադրութեան տակ դնելու՝ պատերազմի կարիքների համար, դարձեալ մի միլիօն րուբլի, բանկերի գաւառական ճիւղերի աջակցութեամբ, հիւանդ ու վիրաւոր ընտանիքներին օգնելու գործը կազմակերպելու համար։ Նոցին Մեծութիւնները ողորմած դարձուածքներով շնորհակալութիւն յայտնեցին նուիրաբերութեան համար և արժանացրին ներկայացուցիչներին ողորմած հարցերի։

Կարմիր Խաչի գլխաւոր վարչութիւնը շնորհակալութեամբ ընդունեց պրօֆ. Լէպըրինեվի առաջարկութիւնը՝ տալ Կարմիր Խաչի խմբերի համար 34—40 ֆին բժշկի և 50—70 փորձված ֆին գթութեան քոյրերի։

Պաշտօնապէս հրատարակվեցին ներքին գործերի մինիստրի մշակած կանոնները, վերաբերեալ պօստային և հեռագրական նոր աւելացված տարիֆի գործադրութեան՝ ներկայ սեպտ. 15-ից սկսած։

Թագուհի Կայսրուհի Ալէքսանդրա Ֆէօդորօվնան անկեղծ շնորհակալութիւն յայտնեց Նարվի մանուֆակտուրային ընկերութեանը 40,000 ր. նուիրաբերելու համար։

Ժող. լուսաւորութեան մինիստրութիւնը, ի նկատի ունենալով ներկայ պատերազմական ժամանակը, բարւօք գտաւ Լերմոնտովի ծննդեան 100-ամեակի օրը՝ 1914 թ. հոկտ. 2-ին՝ բաւականանալ կրթական հաստատութիւններում բանաստեղծի համար հոգեհանգիստ կատարելով, յետաձգելով յոբելեանի կատարումը աւելի բարենպաստ ժամանակի։

Ֆին արդիւնաբերողները հանգանակութիւն են սկսել՝ 100 մահճակալով նոր հիւանդանոց հաստատելու համար։

ՄՕՍԿՎԱ.—Վերջացաւ քաղաքների միութեան համագումարը։ Ընտրվել է 15 անդամից և 15 թեկնածուից բաղկացած մի յանձնաժողով միութեան գործերը վարելու համար։

Բարձրագոյնս հրաման հրատարակվեց ֆինանսների մինիստրի անունով մուրհակների զեղչման նոր կարգի մասին։

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

◆ Պերէմիշլ-Կրակով երկաթուղին ռուս զօրքերը կտրել են։

◆ Մտադրութիւն կայ Ռուսաստան բերված գերիների մեծ խմբեր ուղարկել Ամուրի երկաթուղագծի աշխատանքների համար։

◆ Ռուզվէլտի կարծիքով՝ Գերմանիայից պէտք է վրէժ լուծել Բէլգիան քարուքանդ անելու համար։

◆ Ֆրանս-անգլիական զօրքերը մի կողմից, բէլգիացիք միւս կողմից յաղթական արշաւանքների են ձեռնարկել գերմանացիների մնացորդ ուժերի դէմ։

◆ Աւստրիական սօցիալ դեմօկրատները իրանց թերթերի մէջ գրել են. «Մեր թշնամին՝ ամբողջ աշխարհն է։ Կռւելը անմիտ բան է։ Ներկայ պատերազմը մեզ դէպի կործանում է տանում»։

◆ Լուրերի համաձայն, աւստրիական կայսրը և կառավարութիւնը Վիէննայից տեղափոխվում են Պրագ։

◆ Համաձայնութիւն կայացաւ Ռումինիայի ու Բօլգարիայի միջև՝ ընդդէմ Աւստրիայի, և Բօլգարիայի ու Յունաստանի միջև՝ ընդդէմ Թիւրքիայի։ Երկու դէպքում էլ Բօլգարիան մնալու է չէզոք, որի համար ստանալու է որոշ կոմպէնսացիա։

◆ Տեղեկութիւններ են ստացվել, որ Բերլինում գերմանացիք մանրէներ են պատրաստում ջրհորները խոլերայով վարակելու համար։

◆ Ներկայումս գործող բանակումն գտնվում հետեւեալ ռուս գրողները. Վ. Նօրօկով, պրօֆ. Ե. Անիչկով, Ս. Կրէչէտով, Լ. Վասիլեվսկի, Ա. Ռիկաչով, Արցիբաշեվ, Սկիտալեց, Կուպրին, Տէֆֆի, Ֆօմինեվ և այլն։

◆ Պատերազմում վիրաւորվել են դարձեալ հետեւեալ հայերը. իշխաններ Արղութեան-Երկայնաբազուկներ Կօնստ. Սարգսեան, Միքայէլ Պետրոսեան և Դիմիտրի Ալէքսանդրեան, կապիտան Տէր-Սարգսեանց Պօղոս Ներսիսեան, կապ. Իւզբաշեանց Կոնստանտին Արտէմեան։ Անհետ կորել է պօդպօրուչիկ Դանիէլ-բէկ։

◆ «Universel» ռումինական լրագիրը պնդում է, որ, կայացած խորհրդակցութեան համաձայն, Ռուսաստանը գրաւեց Բուկովինան՝ Ռումինիային յանձնելու նպատակով։ Երբ մնացած կոմպէնսացիաների մասին բանակցութիւնները աւարտվեն, այն ժամանակ էլ Բուկովինան հանդիսաւորապէս կը յանձնվի Ռումինիային, որ կը մտնէ յետոյ Տրանսիլվանիա։

◆ «У. Р.»-ի զինւորական թղթակիցը հեռագրում է. «Գերմանական շտաբը կարծում է, որ Կրակովի անկումը ճանապարհ կը բանայ դէպի Բերլին։ Այդ առիթով Գերմանիան և Աւստրիան Կրակովի մօտ կենտրոնացրել են մօտ մի միլիօն զօրք»։

◆ Լեհաստանի հիւսիսում սպասվում են լուրջ դէպքեր։ Գերմանացիք պատրաստվում են անցնել Լեհաստանի հիւսիսը և կտրել Վարշավայի, Վիլնայի և Չէնստոխովի երկաթուղիների կապը։

◆ Ռումինիայի սահմանում ռուս զօրքերը սրի քաշեցին աւստրիական մի զօրամաս, որի 1000 զինւորից ազատվեցին միայն 9 հոգի։

◆ Մեծ-բրիտանական բոլոր մահմեդականների պարագլուխ Աղախանը յայտնել է, որ Հնդկաստանը կարող է զէնքի կանչել 7 միլիօն զինւոր։

◆ Արտաքին գործերի մինիստր Սազօնովը «Times»-ի թղթակցի հետ խօսելիս յայտնել է, որ ժամանակ է մտածելու միջազգային առեւտրական յարաբերութիւնների մասին։ Մինչև այժմ Գերմանիան Ռուսաստանին վաճառում էր իր ապրանքներից ամեն տարի 500 միլիօն գումարի, այժմ հնարաւոր է դառնում այդ շուկան հաստատել Անգլիայում և Ամերիկայում։ Այժմ և եթ անհրաժեշտ է ուղարկել էքսպերտներ շուկայի պայմանները ուսումնասիրելու համար։

◆ Պրուսական ֆէլդմարշալ կոմս Գէզլէրը, որ խոստացել էր, թէ սեպտ. 6-ին կը լինի Պարիզում կամ անձնասպան կը լինի, յիրաւի ինքնասպանութիւն է գործել իր զօրքերի աչքի առջև։

◆ Թէհրանի հայերը յօգուտ վիրաւոր և հիւանդ զինւորների նուիրել են 3000 ր.։

◆ Բօլգարիայի միջոցով առաջվայ նման ուղարկվում է ռազմամթերք դէպի Թիւրքիա։

◆ Բէլգիացիք պատրաստվում են ձմեռային արշաւանքի։ Կանայք կարում են տաք զգեստներ նրանց համար։

◆ Ցայտնի Անատոլ Ֆրանսը բուռն բողոք է ուղղել բարբարոս գերմանացիներին Րէյմսի տաճարը կործանելու առիթով։

ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
15 սեպտեմբերի

Կ. ՊՈԼԻՍ.—Նաւահանգստի նաւապետը տեղեկացնում է, որ Դարդանէլի նեղուցը փակվեց բոլոր նաւերի համար։

(Լրագիրներից)

◆ Կ. Պոլսից հեռագրում են, որ կաբինէտի երկարատև նիստում որոշվել է առայժմ խուսափել ակտիվ քայլերից։

◆ Կ. Պոլսից հեռագրում են. «Կառավարութեան միջև երկպառակութիւնը աճում է։ Էնվէր-փաշան և Ջէմալ-փաշան պայքարում են իշխանութեան համար։ Թիւրքաց մեծաքանակ գնդեր կենտրոնացած են կովկասեան սահմանագլխում։ Թիւրքաց մամուլի արշաւանքը Յունաստանի դէմ վերսկսվեց։ Դրութիւնը անորոշ է, տրամադրութիւնը՝ լքված»։

◆ Ջաթալջա են մեկնել Էնվէր-փաշային հաւատարիմ զօրքերից մի քանի զօրամաս։

◆ Դէպի Կովկաս են ուղարկվում նոր էմիսարներ։ Բ. Դուռը հայերին խոստանում է լայն բարենորոգումներ, փոխարէնը պահանջելով անձնուիրութիւն։

◆ Կ. Պոլսից հեռագրում են, որ հայկական վիլայէթներում սպանութիւններ ու կողոպուտներ են։ Թիւրքաց իշխանութիւնները յարքունիս են գրաւում ֆրանսիական Բէյրութ-Դամասկոս ճանապարհի իրերը։

◆ Կ. Պոլսից հեռագրում են, որ Ռուսաստանը իր հաշիւները Թիւրքիայի հետ տեսնելու է ներկայ պատերազմից յետոյ։

◆ Կ. Պոլսից հեռագրում են, որ գերմանացի օֆիցերները ծախսեցին իրանց արտասահմանեան շքանշանները և դրամը նուիրեցին յօգուտ Թիւրքաց Կարմիր Մահիկի։

◆ Կ. Պոլսում տարածված է տիֆ վարակիչ հիւանդութիւնը, որ անցել է արդէն զօրանոցները։

ԳԵՐՄԱՆԱՑԻՆԵՐԻ ԲԱՐԲԱՐՈՍՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

(Ականատեսի պատմածը)

«Daily Chronicle»-ի թղթակիցը հաղորդում է. «Ես Անտվերպէնում ամենաողբերգական գիշերն եմ ապրել այս պատերազմի ընթացքում։ Պատմութեան մէջ առաջին անգամ քաղաքակրթված հասարակութիւնը ռմբակոծութեան ենթարկվեց երկնքից գիշեր ժամանակ։ Ցեպպելինը շատ բանով կարող է պարծենալ։ Նա մահացրեց և անդամալուծեց անպաշտպան տղամարդկանց, կանանց և երեխաների և ռումբեր նետեց հիւանդանոցների վրա, որոնք լի էին հիւանդներով։

«Ես զարթնեցի գիշերվայ ժամը 1-ին խլացուցիչ ռմբակոծութիւնից։ Դուրս թռչելով փողոց, ես նկատեցի վերեւում, հողից 700 ֆուտ բարձրութեամբ հսկայական «Ցեպպելինը»։ Շրջելով քաղաքում, ես հաշւեցի, որ 10 զանազան փողոցներ վնասվել են ռումբերից։ Իմ հաշւով 900 շինութիւն թեթև վնասներ են ստացել, իսկ 60 տուն բոլորովին քար ու քանդ են արվել։ Զոհերի թիւը դեռևս հաստատված չէ։ Ես անձամբ իմ ճանապարհին հանդիպեցի չորս դիակի։ Մի թաղամասում կանգուն է մնացել միայն մի տուն։ Նրա շուրջը ամեն ուղղութեամբ ընկած էին այլանդակված բնակիչները։ Place de la Paix Publique-ը իրանից ներկայացնում է մի սարսափելի պատկեր աւերածութեան, որի նմանը ես իմ կեանքում չեմ տեսել։ Ես գնում էի Թագաւորի քարտուղարի ուղեկցութեամբ։ Ռումբերը նետվում էին հասարակական շէնքերի վրա, մանաւանդ Թագաւորի պալատի վրա։ Քարտուղարը տուեց ինձ երկու ռումբի կտոր, որը գտնըվել էր պալատի մօտ, որպէսզի Եւրօպայի կառավարութիւնները, ականատեսի վկայութեամբ, կարող լինեն միանալ բողոքին։

«Ես խնդրեցի արտաքին գործերի քարտուղար բարօն Ֆօն-դեր-Էլստին, ռուսաց դեսպանին, մինիստր Վանդերվելդէին, մինիստր Իմանսին և կոմս Գօբլէին ուղեկցել ինձ։ Նրանք սարսափեցին գերմանացիների ռումբերի աւերածութիւնները տեսնելով»։

ՊԻԷՐ ՄԻԼԼԸ ՌԷՅՄՍԻ ՏԱՃԱՐԻ ՄԱՍԻՆ

Ցայտնի գրող Պիէր Միլը հետեւեալ հեռագիրն է ուղղել «Веч. Время»-ի խմբագրութեանը Րէյմսի տաճարի կործանման առիթով.

«Ամեն անգամ, երբ ես մտածում եմ, որ գերմանացի վայրենիները կործանել են Րէյմսի տաճարը, ես ուզում եմ, որպէսզի բոլոր ռուսները յիշեն, թէ մեր Պարիզի Notre Dame-ը միեւնոյնն է, ինչ որ ուղղափառների համար Կիէվի ձեր նշանաւոր ս. Վլադիմիրի տաճարը. բայց Րէյմսի տաճարը—այդ նոյնն է ֆրանսիացիների համար, ինչ որ ռուսների համար Մօսկվայի հինաւուրց սրբութիւններն են։ Եւ ես այժմ սրտանց յուզվում եմ, ասես, կորցրել եմ իմ ամենաթանգագինը, իմ էութիւնը։

«Սակայն եթէ հարկ լինի տալ անգամ Պարիզը, Ամիէնի և Շարտրի տաճարները, եթէ հարկ լինի տալ մեր դարաւոր ամեն սրբութիւնները նրա համար, որպէսզի ամբողջ աշխարհը իմանար թշնամիների գազանութիւնների ու վայրենութիւնների մասին,—թող այդպէս լինի։

«Առաջին անգամը չէ, որ Ֆրանսիան տանջանքների զոհ է դառնում աշխարհում արդարութիւնը վերականգնելու համար»։

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՊՐՕՖԵՍՈՐԻ ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ՄՈԼՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

(Պատերազմ, պատրիօտիզմ և գիտութիւն)

II

Այսպէս անուանված ռասսայական թէօրիայից բղխեցրած իր թեզիսը փաստական տւեալներով հիմնաւորելու և արդարացնելու համար պրօֆ. Լամպրեխտը դիմում է երեք շատ յայտնի օրինակների՝ գերմանական, ռոմանական կամ լատինական և սլաւօնական ցեղական տոհմերի։ Երեք ցեղերի խոշորագոյն ներկայացուցիչներ հանդիսանում են ներկայ դէպքում Գերմանիան, Ֆրանսիան և Ռուսիան։ Որպէսզի հաստատէր և համոզեցուցիչ դարձնէր իր հիմնական մտքի ճշգութիւնը, պէտք է, անշուշտ, գերմանական պրօֆեսորը իր երեք օրինակների վերաբերմամբ էլ պահպանէր գէթ տանելի սկզբունքային հետեւողականութիւն։ Եթէ, իրաւ, ներկայ պատերազմում առաջմղիչ ազդակ է ծառայում ռասսայական կապը, ապա պարտական էր Լամպրեխտը ցոյց տալ, որ իր յիշած երեք ռասսայական առանցքները (Գերմանիա, Ֆրանսիա, Ռուսիա) խմբել են իրանց շուրջը իրանց ցեղային միւս՝ աւելի մանր ճիւղաւորութիւններին։

Հէնց այս կարևոր կէտումն է, որ պրօֆ. Լամպրեխտը գնում է իրան՝ կարծես անգիտակցաբար և ուղղակի կուրօրէն՝ արգահատանքի արժանի կոմիկական վիճակի մէջ։ Բանից դուրս է գալիս, որ նրա պատմագիտական, «խոհուն ու խորունկ» միտքը իր արդարացումը գտել է միայն առաջին օրինակի վերաբերմամբ. այսինքն միայն գերմանական գաղափարի (կամ Գերմանիայի, իբրև ներկայացուցիչ ուժի) շուրջն են խմբվել գերման ցեղի միւս մասնիկները։

Իսկ Ֆրանսիա՞ն։

Նա կղզիացած է լատինական աշխարհում,—ասում է մեզ գերմանացի գիտնականը։

Իսկ Ռուսիան։

Նրանից երես են դարձրել սլաւօնական տարրերը Աւստրօ-Ունգարիայում,—աւելացնում է Լայպցիգի պրօֆեսորը։

Բայց ինչո՞վ հիմնաւորվեց և արդարացաւ մեր պարոն պրօֆեսորի ռասսայագիտական վերև յիշված թեզիսը՝ ներկայ պատերազմի նկատմամբ, երբ իր բերած երեք օրինակներից երկուսը՝ իր իսկ պատճառաբանութեամբ հակառակ իրան են խօսում, այսինքն հերքում են իր հիմնական միտքը, թեզիսը։

Հերիք է։ Փրկենք պրօֆ. Լամպրեխտին խճճված հակասութիւնների ցանցից և որակենք նրա բռնած դիրքը իր իսկական անունով։

Իր դասախօսութեան մէջ գերմանացի գիտնականը պահ մի մոռացել կամ գիտակցաբար եղծել է գիտնականին վայել քննող ու վերլուծող կոչումը և իջել է իր բարձրութիւնից մինչև հրապարակային ամբոխաբար դեմագոգի և սերվիլիս ժուռնալիստի այնքան աննախանձելի աստիճանը։

Թող համոզվէ ընթերցողը, որ խիստ չեն մեր արտայայտութիւնները։

Ասացէք խնդրեմ, ուրիշ ինչ անուն տալ մի անուանի պրօֆեսորի, երբ նա թոյլ է տալիս իրան մի այսպիսի բացարձակ կեղծիք։

Գերմանիայի հետ են, նրա գաղափարի շուրջն են խմբվել Շվէդիան, Նօրվեգիան, Դանիան, Հօլլանդիան և անգամ (լաւ լսեցէք) Շոտլանդիան։

Ինչի նման է այս. մի շարք չէզոք պետութիւններ յայտարարել որպէս համակրող ու կողմնակից Գերմանիայի։ Ցիշել անգամ Շոտլանդիայի անունը, որի պատգամաւորները խանդավառ ոգևորութեամբ ընդունեցին պարլամենտում կառավարութեան յայտարարութիւնը՝ Գերմանիայի դէմ պատերազմելու վերաբերմամբ, և որի որդիները՝ միացած անգլիականի և իրլանդականի հետ՝ կեանքի և մահվան կռիւ են մղում Լամպրեխտի վանդալ հայրենակիցների դէմ՝ բէլգիական և ֆրանսիական ազատ տերրիտօրիաներում։

Կրկնում ենք, ինչի նման է այդ և ինչ անուն տալ գերմանական պրօֆեսորին։ Նըման չէ՞ արդեօք նրա վարմունքն այն տենդենցիօզ, ստայօդ յերիւրանքներին, որ օրն ի բուն աղմկում է Բերլինի և Վիէննայի փողոցներում շովէն մամուլը՝ սեփական պարտութիւնը յաղթութիւն, հակառակորդի յաղթութիւնը պարտութիւն յայտարարելով։ Նման չէ՞ն արդեօք նրա փաստական խեղաթիւրումները Կալիշը գրաւած գերման հրամանատարի հրատարակած թռուցիկի այն կէտերին, ուր ասված էին, որ իբր Եապօնիան և Թիւրքիան պատերազմ են յայտարարել Ռուսիային, Իտալիան՝ Ֆրանսիային, իսկ Ամերիկան՝ Անգլիային։

Այս նման է. տարբերութիւնը կեղծիքի և խեղաթիւրման ոչ թէ բնաւորութեան և մոտիւների մէջ է, այլ ձևի և աստիճանի։

Բայց այդ բաւական չէ։ Որքան Կարլ Լամպրեխտը Գերմանիայի նկատմամբ կեղծում է դրական իմաստով, այնքան Ֆրանսիայի և Ռուսիայի վերաբերմամբ կեղծում է նա բացասական իմաստով։

Ֆրանսիան կղզիացած է, չունի համակրանք և կողմնակցութիւն ռոմանական աշխարհում,—աւետել է Լայպցիգի գիտնականը իր ունկնդիրներին։

Միթէ հերքման կարիք ունի այս բացարձակ տենդենցիօզ միտքը, այս՝ օդից քաղած, շինծու փաստը։

Գեղեցիկ Ֆրանսիան, այդ ռամկավար, միշտ աւետաբեր երկիրը՝ իր ազատասէր, անդադար առաջ խոյացող ժողովրդով, վայելել է հանրական համակրանք ոչ միայն ռոմանական, այլ և ողջ քաղաքակիրթ աշխարհի լաւագոյն սերունդների կողմից։ Թող նայեն ու համոզվեն Լամպրեխտները, որ միայն և միմիայն Ֆրանսիան է, որի զօրքի շարքերում կռւում են այսօր տասնեակ հազարաւոր կամաւորներ համարեա բոլոր ազգերից՝ յանուն ազատ ու առաջադէմ Ֆրանսիայի պաշտպանութեան՝ ընդդէմ ռէակցիօնէր ու բիւրօկրատական Գերմանիայի վանդալական արշաւանքների։ Վայելե՞լ է Գերմանիան երբեւից, օտար տարրերի խանդավառ ոգևորութեան արդիւնքը՝ քաղաքական նման ծանր ճգնաժամի օրերին։ Կռւե՞լ է գէթ մի ազատակամ կամաւոր յօգուտ Պրուսիայի այն ժամանակ, երբ նա հարիւր տարի առաջ գետնատարած փըռված էր Նապօլէօն I-ի ոտքերի տակ և ազատագրվելու մահաբեր ջղաձգութիւնների մէջ էր գտնվում։ Ոչ, պրօֆ. Լամպրեխտ, համաշխարհային պատմութիւնը վաղուց է արդէն իր լաւագոյն էջերում երախտագիտական գնահատութեան պսակներ հիւսել հոյակապ Ֆրանսիայի ճակտին։ Դուք Գերմանիայի՝ պաշտօնական - կառավարական Գերմանիայի «հոգսը քաշեցէք», որ իր յունկերական բիւրօկրատիայով և պրուսական միլիտարիզմով չունի մազաչափ երախտիք քաղաքակիրթ մարդկութեան վրա և այժմ նա է միայն, որ կղզիացած է թէ գերմանական, թէ ռոմանական և թէ սլաւօնական աշխարհներում։

Փաստերի ակներև խեղաթիւրումն է նշանակում նաև սլաւօնական տարրերի վերաբերմամբ պնդածը, որ իբր սրանք երես են դարձրել Ռուսաստանից և ազատակամ միացել գերմանիզմի գաղափարի շուրջը։ Հպատակ սլաւօն տարրերի մէջ ամենամեծ ու հասունացած ճիւղը կազմում է, անկասկած, լեհութիւնը՝ իր երեք ցրված հատուածներով։ Ինչո՞ւ պատմաբան Լամպրեխտը այդքան միամիտ է ձևանում, չը հասկանալու համար ազգային-քաղաքական վերածնութեան այն մեծ, դարագլուխ աւետող ժամը, որ բերում է ներկայ պատերազմը ամենից առաջ հէնց լեհութեան համար։ Քսան միլիօն ցիրուցան, դրակօնական ճնշումների ենթակայ լեհութեանը ժպտում է բաղդի արևը՝ համախմբվելու մի ընդհանուր ազգային-աւտօնօմ կաղապարի մէջ։

Իսկ ինչ է նշանակում այդ խոշոր պատմական փաստը։

Դա նշանակում է, որ ներկայ պատերազմում համայն լեհութեան ազգային ազատագրութեան շահերը գալիս ու համերաշխում են ռուսական (և առ հասարակ երեքպետեան) զէնքի յաղթական աջողութիւնների հետ։

Պակաս շահագրգռութիւն չունեն աւստրիական մնացած սլաւօն ժողովուրդները՝ չեխերը, սլովակները, սերբերը և այլն, նոյնիսկ միւս ոչ սլաւօն մանր ժողովուրդները, որոնք տենչացել և ձգտել են միշտ ազատվել տիրող գերմանական տոհմի բռնի խնամակալութիւնից և որոնց թէրևս կաջողվի՝ եթէ Աւստրիայի պարտութիւնը լինի արմատական in permanens, կարկատան միապետութեան ջախջախված փլատակների վրա՝ կառուցանել ազգերի միացեալ պետութիւնների ազատ ֆեդերացիա։

Այսպէս ուրեմն մենք տեսանք, որ գերմանական պրօֆեսորը կեղծում, խեղաթիւրում, առնուազը անգիտանում է իր աչքի առաջ կատարվող ակնյայտնի փաստերը։ Աններելի է նրան այդպիսի մի վարմունք, մանաւանդ իբրև պատմաբանի։ Գիտութիւնը և գիտական կոչումը զոհաբերել է նա գռեհկական գռեհիկ պատրիօտիզմին՝ ամբոխամիտ ունկնդիրներից ծափեր վաստակելու համար։

Այսքանը Լամպրեխտի դասախօսութեան կեղծիքների բաժինը։ Նոյնքան խղճալի է նրա պատմագիտական ըմբռնումների բաժինը։ Ծանօթանանք վերջինիս հետ ևս։

B. Lucifer

«ԻՐԱՒՈՒՆՔ, ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ, ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԻՒՆ»

Քանի աւելի են տարածվում ներկայ արիւնահեղ դրամայի ալիքները, այնքան աւելի է պարզվում երկու հակառակ բանակների՝ աւստրօ-գերմանական և երրեակ համաձայնութեան տրամագծօրէն հակառակ ձգտումները։

Մինչ գերմանական կառավարութիւնը, գերմանական իմպերիալիզմը «ուժը իրաւունքի առջևից է գնում» Բիսմարկի դարձուածքը ընդունում է որպէս պետական իմաստութեան հիմք, մինչ նա ագրեսիվ ուժը դարձրել է պաշտամունք, պետական կուլտ, երրեակ համաձայնութիւնը իր դաշնակիցներով առաջ է բերում իրաւունքի սկզբունքը։

«Իրաւունք, արդարութիւն, քաղաքակրթութիւն»—ահա այն պատգամները, որ ղեկավարվում են հակագերմանական կօալիցիայի ներկայ արիւնահեղ կռւում։

«Մենք կը պաշտպանենք իրաւունքը և քաղաքակրթութիւնը»,—լսվեց ֆրանսիական պարլամենտում հէնց պատերազմի սկզբում։

«Անհնարին է թոյլ տալ,—ասաց Ասկվիտ համայնքների պալատում,—որ փոքր ու թոյլ պետութիւնները աւելի ուժեղի կամայականութեան առարկայ դառնան»։ Եւ Մեծ-Բրիտանիան պատերազմ յայտարարեց ի պաշտպանութիւն խախտված իրաւունքի։ Նա ասաց՝ միջազգային իրաւունքը մի դատարկ, անարժէք հնչիւն չէ, որի հետ կարելի լինէր խաղալ, այլ մի սկզբունք, որի խախտվելը անթոյլատրելի է։ Անգլիայի յայտարարած պատերազմի բարոյական շարժառիթն էր՝ միջազգային պայմանագրերի անխախտելիութեան սկզբունքը, որ ցինիկաբար ոտնատակ տուեց Գերմանիան։

Եւ գերմանական անպատկառութեան զոհ փոքրիկ հերոսական Բէլգիան գերբնական ուժ է գործադրում, ճակատագրական պատերազմ է մղում յանուն իրաւունքի, ճըշմարտութեան, ազատութեան։ Բէլգիայի բանւորական կուսակցութեան պարագլուխ և միջազգային սօցիալիստական բիւրօյի նախագահ, ներկայումս մինիստր Վանդերվելդէ ասում է. «Մենք կռւում ենք յանուն անկախութեան, մենք պաշտպանում ենք Եւրօպայի քաղաքական ազատութիւնը»։

Իսկ Ռուսաստանը, սլաւօնական ժողովուրդների հովանաւորը, իր Գերագոյն Զօրահրամանատարի կոչով, ուղղված Աւստրօ-Ունգարիայի ժողովուրդներին, աւետում է նրանց՝ ազատութիւն, նրանց իղձերի, լաւագոյն իղձերի իրագործում, նրանց լեզուի, հաւատի, ազգային առանձնայատկութիւնների ազատ զարգացում։

Աւելի ևս լայն հորիզոններ է բանում լեհ ժողովրդի առաջ Գերագոյն Զօրահրամանատարի պատմական կոչը ուղղված լեհերին։ Նա վճռում է լեհական հարցը իրաւունքի և ազատութեան լայն սկզբունքներով։

Այդ խոշոր, պատմական դոկումենտները նոր դարագլուխ են ստեղծում Ռուսաստանի քաղաքական կեանքի պատմութեան մէջ. նրանք վկայում են պետական լայն աշխարհհայեցողութեան մասին, նրանք աւետում են լաւագոյն ապագայ Ռուսաստանի բոլոր ժողովուրդներին։ Այդ աշխարհհայեցողութիւնը տրամաբանօրէն պէտք է հիմք ծառայէ և ներքին քաղաքականութեան և երկրի սօցիալ-քաղաքական հարցերի շըրջանում։

Դաւանելով անշահադիտական քաղաքականութիւնը և պաշտպանելով իր երկրի մանր ժողովուրդների ազգային կուլտուրայի ազատ զարգացման սկզբունքը, պետական նոր քաղաքականութիւնը կը ստեղծի այն հսկայական, անառիկ, անյաղթելի մեծութիւնը, որ իրաւամբ կը կրի Մեծ Ռուսաստան անունը։

Այդ մեծ Ռուսաստանի, ընդհանուր հայրենիքի սիրոյ գաղափարն է այժմ ի մի ձուլել նրա բոլոր ժողովուրդներին վտանգի առաջ։

Հաշւի առնելով հակագերմանական կոալիցիայի և մասնաւորապէս Ռուսաստանի վերաբերմունքը դէպի մանր ժողովուրդների բռնաբարված իրաւունքը, ներկայ պատերազմը իրաւամբ կարելի է ազատագրական անուանել։

Իսկ յուսալով Ռուսաստանի վերջնական յաղթանակին, մենք հաւատով դարձնում ենք մեր հայեացքը դէպի լուսաւոր ապագան՝ դէպի իրաւունքի, արդարութեան, քաղաքակրթութեան ազատ զարգացման շրջանը։

Սոֆիա Դանիէլ-Բէկ

ԱՆԳԼԻԱՑԻ ՀՐԱՊԱՐԱԿԱԽՕՍԻ ԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

«Кіевская Мысль» թերթի Լոնդոնի թղթակիցը յայտնում է անգլիացի նշանաւոր հրապարակախօս և վիպասան Խիլլէր Բելլօկի յօդուածի բովանդակութիւնը, ուր նա նկարագրել էր «ապագայ պատերազմի» պատկերը ամենայն մանրամասնութեամբ, որը զուգադիպում է այն ամենի հետ, ինչ-որ հաղորդում են հեռագիրները Բէլգիայից և Ֆրանսիայից։

Բելլօկ իր նոր յօդուածում քննում է պատերազմի պատճառները և նրա հնարաւոր հետևանքները Եւրոպայի համար։

Ինչո՞ւ Անգլիան խառնվեց պատերազմին։ Նրա համար, պատասխանում է Բելլօկ, որ Գերմանիան, ծովային վտանգաւոր մրցակիցը, փորձում է ստանալ Հիւսիսային ծովը, և յետոյ, յենված նուաճած Բէլգիայի և Հոլլանդիայի նաւահանգիստների վրա, կարող էր հարուած հասցնել Մեծ-Բրիտանիայի սրտին։ Անգլիա զօրք հանելը Գերմանիայի համար հնարաւոր կը լինի այն դէպքում միայն, երբ նա գրաւի Օստենդէն, Անտվէրպէնը, կամ Անգլիային մօտիկ որևէ մի նաւահանգիստ։ Անգլիայի արտաքին քաղաքականութիւնը միշտ ձգտել է Հիւսիսային ծովի ափերը պահել փոքր և թոյլ պետութիւնների ձեռքին։ Մանր պետութիւնները այժմ վտանգի մէջ են, իսկ այդ նշանակում է, որ վտանգի մէջ է և Անգլիան։ Հասկանալի է, թէ ինչու նա ընդունեց գերմանական մարտակոչը։

Ինչո՞վ կը վերջանայ պատերազմը։ Ամենից առաջ նկատենք,—ասում է Բելլօկը,—որ պատերազմը առաջ է տարվում հզօր պետութիւնների ձեռքով։ Նրա ելքը կը որոշի այդ պետութիւնների դերը ապագայում երկար տարիների համար։ Այդ պատճառով պատերազմը մղվելու է մինչև այն ժամանակ, երբ կռւող պետութիւններից որևէ մէկը կատարեալ և վճռական պարտութիւն չը կրի։

Ենթադրենք որ Գերմանիան յաղթի։ Ի՞նչ կը լինի այն ժամանակ։ Գերմանիան հաւան բոլոր մանր պետութիւնները (Բէլգիան և Դանիան դրանց թւում) կը յայտարարի իր իշխանութեան ներքոյ։ Նոյնպէս կը վարվի նաև Շվէյցարիայի վերաբերմամբ։ Գերմանիան կը պարտաւորեցնի Ֆրանսիային քանդել իր բոլոր ամրութիւնները, վճարել ծանր կոնտրիբուցիա և նրա վզին կը փաթթի առևտրական ծանր պայմաններ։ Նա թոյլ չի տայ Արևմտեան Եւրոպային զինվելու։ Հիւսիսային ծովի բոլոր նաւահանգիստները նա կը վերցնի իր իշխանութեան ներքոյ։ Նա կը փորձի ֆրանսիական սահմանը սղմել դէպի հարաւ, որպէս զի իր ձեռքին ունենայ և Լամանշի նաւահանգիստները։ Բացի այդ, Գերմանիան, ի հարկէ, կաշխատի իրան միացնել գաղութները, մանաւանդ Ֆրանսիայի աֆրիկական գաղութները։ Արևելեան սահմանում Գերմանիայի մտադրութիւնները դըժուարութեան կը հանդիպեն, որովհետև անկարելի է Ռուսաստանին կատարեալ ուժասպառութեան հասցնել։ Հաւանական է, որ Գերմանիան Աւստրիայի դաշնակցութեամբ կը ստեղծէ մի շարք, ըստ երևոյթին, անկախ պետութիւններ, որոնք Ռուսաստանին կը բաժանեն Եւրոպայից։

Գերմանիայի յաղթութիւնը ամենից ծանր կերպով կանդրադառնայ հէնց Անգլիայի վրա։ Բրիտանական կայսրութեան անկախութիւնը և հզօրութիւնը անուղղելի կերպով վնաս կը կրեն։

Արևմտեան ռազմաբեմում շուտափոյթ յաղթանակ տանելուց յետոյ, Անգլիան, երևի, մեծ դեր կը խաղայ հաշտութեան պայմաններ մշակելու գործում, որովհետև գերմանական նաւահանգիստների շրջապատումը Գերմանիային կը հասցնի ճգնաժամի։ Անգլիան կը պահանջի Կիլի նեղուցի չէզոքացումը և գերմանական նաւատորմի թւի սահմանափակումը։ Ֆրանսիան կը ստանայ Էլզաս-Լոտարինգիան։ Անգլիան չի ցանկանայ, որպէս զի որևէ պետութիւն չափազանց ուժեղանայ, դիցուք այդ ընդհանուր թշնամու հաշւով։

Եթէ Գերմանիային յաղթելու գործում մեծ բաժինը ընկնի ֆրանսիական զօրքին, և այդ յաղթութիւնը ձեռք կը բերվի երկար ու լարված պայքարից յետոյ, այն ժամանակ Եւրոպան խոշոր փոփոխութիւններ կը տեսնի։ Այդ փոփոխութիւնները անկարելի է այժմեանից նախատեսել։

Իր գուշակութիւնների վերջում Բելլօկ մի այսպիսի եզրակացութիւն է անում.—ով էլ յաղթի այս պատերազմում, նա անխուսափելի կերպով պէտք է ոչնչացնի զինւորակոչութեան ընդհանուր սիստեմը և նպաստի մանր պետութիւնների բազմանալուն։

Բելլօկի յօդուածը ահագին տպաւորութիւն է թողել Լոնդոնում։

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԺԱՄԱՆԱԿԱԳԻՐ

Անցեալներում, «Մշակի» № 187-ում մենք տուինք նոյն վերնագրով մի տեսութիւն, թէ ինչ է պատահել մի ամսվայ ընթացքում, պատերազմի սկզբից մինչև օգոստոսի 13-ը. այժմ տալիս ենք նոյն տեսութեան շարունակութիւնը։

⁂

Ի՞նչ է պատահել մի ամսվայ ընթացքում։

Օգոստոս

14-ին.—Բէլգիայի ճակատամարտը վերջացաւ դաշնակից զօրքերի նահանջով։ Ռուսական զօրքի աջողութիւնը արևելեան Պրուսիայում և Գալիցիայում։ Ցինդաօն շրջապատվում է նաւերով։ Ֆրանսիացիները մաքրում են Վերին Էլզասը։ «Ցեպպելինը» բռնվում է Անտվերպենում։ Կիտչէների ճառը լորդերի պալատում։ Բօկետի-Կատարրօյի ռմբակոծութիւնը։

15-ին.—Ռուսաց զօրքերի արշաւանքը Արևելեան Պրուսիա և Գալիցիա շարունակվում է մեծ աջողութեամբ։ Ֆրանսիացիները մաքրում են Վերին Էլզասը։ Մօնսի մօտ եղած ճակատամարտում սպանվեց պրինց Ալբերտը, Վիլհէլմ II-ի հօրեղբայրը։ Յունաստանը զօրք է ուղարկում բուլղարական սահմանը։

16-ին և 17-ին.—Ռուս գեներալների աջողութիւնները Խօլմի և Լիւբլինի նահանգների գաւառներում և Արևելեան Գալիցիայում։ Արևելեան Պրուսիայում ռուսները վերցնում են Ալէնշտէյնը։ Գերմանացիները վերցնում են ֆրանսիական Լօնգուի ամրոցը։ Ֆրանսիացիները ետ են վերցնում Լիւնեվիլը։ Ռուսները գրաւում են Տիլզիտը։ Նամիւր բերդի անկումը։ Ֆրանսիայում կազմվում է մինիստրների նոր կաբինէտ, որի մէջ մտնում են 2 սոցիալիստ որպէս մինիստրներ։

18-ին և 19-ին.—Ռուսների աջողութիւնները արևելեան Գալիցիայում։ Վերցնում են բազմաթիւ գերիներ, թնդանօթներ և ռազմամթերք։ Արևելեան Պրուսիայում Օստէնդէի շրջանում երևում են գերմանական նոր ուժեր։ Ֆրանսիացիների անաջողութիւնները Լօնւա-Պարիսէն գծի վրա։ Գերմանացիների արշաւանքը դէպի Լաֆէր։

Բելգրադի ռմբակոծութիւնը։ Չեռնօգորցիների աջողութիւնները աւստրիացիների դէմ։

20-ին.—Ռուսական զօրքերի անաջողութիւնները և գեներալներ Սամսոնովի, Մարտոսի, Պեստիչի և շտաբի մի քանի պաշտօնեաների սպանվելը։ Գեներալ Սանդէրսը նշանակվում է Եւրոպայի թիւրքական զօրքերի հրամանատար։ Թիւրքերը գերմանական զինւորական ինժեներների ղեկավարութեամբ ամրացնում են Էրզրումը։ Ֆրանսիական զօրքը գեներալ Պօյի գլխաւորութեամբ ոչնչացնում է գերմանական մի կորպուս։ Պետերբուրգը վերանուանվում է Պետրօգրադ։

21-ին.—Կռիւ Գնիլայա-Լապա գետի վրա։ Աւստրիացիների նահանջը։ Ռուսները շարժվում են դէպի Լվօվ։ Գերմանացիները արևմտեան ճակատից զօրք են տեղափոխում արևելեան ճակատ։ Մեծ ճակատամարտ Բելֆօրի մօտ։ Գերմանական աէրօպլանը երևում է Պարիզի գլխին։ Ճապօնացիները գրաւում են Կիօ-Զաօյի բոլոր կղզիները։

22-ին.—Ռուսները վերցնում են Լվօվը։ Աւստրիական զօրքի պարտութիւնը և 150 թնդանօթի գրաւումը։ Թալէաթ-բէյի զրոյցը մեծ վէզիրի և Էնվէր-փաշայի հետ։ Ժիվէ բերդի անկումը։ Գերմանացիները գրաւում են Կօմբրէն, Պարիզից 75 կիլօմետր հեռու։ «Ցեպպելինը» երևում է Անտվերպէնի գլխին։ Ռումինիան մերժում է միանալ Բուլղարիային և Թիւրքիային։

23-ին.—Լվօվի և Գալիչի առումը գեներալ Ռուզսկու և գեն. Բրուսիլօվի գնդերի կողմից։ Անգլիացիները գրաւում են Սամօայի գերմանական կղզիները։ Ֆրանսիական կառավարութիւնը Պարիզից տեղափոխվում է Բօրդօ։ Սենկեվիչի կոչը արտասահմանի լեհերին։ Գերմանացիների առաջխաղացումը դէպի Պարիզ երեք գծով։ Ֆրանսիական նախագահի և կառավարութեան հրովարտակը։ Գեներալ Գալլիէնի յայտարարութիւնը։ Նոր զօրահաւաք Անգլիայում։

24-ին.—Գերմանական կայսրը և բաւարական ու Վիւրտէմբերգեան իշխանը Կոբլենցից գնում են Ստրասբուրգ։ Թշնամու զօրքերը առաջ են շարժվում Պարիզի շրջանում։ Գերմանական զօրքի մի մասը մտնում է Շվէյցարիա, ֆրանսիացիների ձեռքը գերի ընկնելուց խուսափելու համար։

25-ին և 26-ին.—Արևելեան Գալիցիայում ռուս զօրքերը գրաւում են Ստրին։ Ֆրանսիա մտած գերմանական զօրքերը մի կողմ թողնելով Պարիզի ամրութիւնները, գնում են դէպի հարաւ-արևելք։ Մօբէժի ռմբակոծումը։ Երեք ամրութիւն քար ու քանդ է արվում։ Ռուսաստանը, Անգլիան և Ֆրանսիան պարտաւորվում են անջատ հաշտութիւն չը կնքել պատերազմի ընթացքում։ Բէլգիացիները հեղեղում են Բէլգիայի մի մասը, դրա հետ և Մալինը։ Գերմանացիները մեծ կորուստներ են տալիս Մալինի մօտ՝ ջրում խեղդվելով։ Միացեալ Պետութիւնները նաւատորմ են կենտրոնացնում Ատլանտեան ծովափում։

27-ին.—Ռուսները վերցրին Միկօլաեվան, 40 թնդանօթով և մեծ ռազմամթերքով։

Լուրջ կռիւներ Ռաւա-Ռուսկայայի շրջանում։ Գերմանացիները մաքրում են Լիլ քաղաքը։ Գերմանացիների պարտութիւնը Հիւսիսային ծովում։ Գերմանացիների կորուստը Տերմօնդի մօտերքը։ Վիլհէլմ II-ի և գերմանական գլխաւոր շտաբները տեղափոխվում են Մէց։ Բանաստեղծներ Ռօստան և Րիշպէն որպէս կամաւոր մտնում են ֆրանսիական բանակը։

Օգոստոսի 28-ին և սեպտեմբերի 2-ին.—Գալիցիական կռիւը, որ շարունակվեց 17 օր, վերջացաւ ռուսների յաղթանակով։ Ֆրանսիա մտած գերմանական զօրքերը նահանջում են ամբողջ ճակատում։ Դաշնակից զօրքերը հետևում են նրանց։ Բէլգիական զօրքը՝ անցնելով յարձակման՝ գերմանացիներին ստիպեց նահանջել ամբողջ ճակատով։ Սերբերը և չեռնօգորցիները, մի շարք աջողութիւններ տանելով աւստրիացիների վրա, շարժվում են դէպի Աւստրիայի խորքը։

Սեպտ. 3-ին.—Ռուսական զօրքը շարունակում է յարձակում գործել աւստրիականի վրա նախկին աջողութեամբ։ Հարաւային Գալիցիայում կռւում աչքի է ընկնում գեներալ Ռադկօ Դմիտրիեվ։ Րեննենկամպֆի զօրքը դուրս է գալիս նեղ դրութիւնից և բռնում է նպաստաւոր դիրք յետագայ գործողութիւնների համար։ Բէլգիական զօրքը նահանջում է դէպի Անտվերպէնի ամրութիւնները։ Անգլօ-ֆրանսիական զօրքի յարձակումը շարունակվում է։ Դաշնակիցները անընդհատ ընդհարումներ են ունենում։ Գերմանական «Խելա» յածանաւի խորտակումը։

4-ին.—Ռուսական զօրքերը մօտենում են Պերեմիշլին։ Ռադկօ Դմիտրիեվին շնորհվում է 4-րդ աստիճանի Գէօրգի շքանշան։ Ճապօնական զօրքերը գրաւեցին Պինդաօ և Չիմօ։

5-ին.—Գերագոյն Զօրահրամանատարի կոչը Աւստրօ-Ունգարիայի ժողովուրդներին։ Չեռնօգորական զօրքերը նոր յաղթութիւններ են տանում աւստրիացիների վրա։ Սերբիական զօրքը մտնում է Բօսնիայի խորքը Վիշէգրադը վերցնելուց յետոյ։ Ճապօնացիները գրաւեցին Ցզիաօչժօան և Ցիմօն Ցինդաօյի մօտ։

6-ին.—Ռուս զօրքը գրաւեց Սանդօմիրը և Կրժեշովի մօտի ամրութիւնները (Սանի վրա)։ Եավօրովի մօտ վերցրեց 30 թնդանօթ և 5000 գերի։ Աւստրիան կորցրեց մօտ 250,000 վիրաւոր և սպանված, 100,000-ից աւելի գերի, 400 աւել թնդանօթ և բազմաթիւ դրօշակ։ Կ. Պօլիս մտան գերմանացի զինւորականներ ճանապարհորդների անուան տակ։

7-ին.—Գերմանական զօրքի առաջացած մասերը ամրանում են Չենստօխօվ-Վէլիւն-Սլեսին ճակատում։ Սանդօմիրի մօտ ջարդվեց գեներալ Վօյերշի կորպուսի մնացորդը։ Էն գետից դէպի հիւսիս բարձունքներում ֆրանսիական զօրքը գիշերային հակայարձակում գործեց Կրաննի և Րէյմսի միջև։

8, 9 և 10-ին.—Ռուսական ծանր արտիլէրիան կրակ է արձակում Եարօսլաւի վրա։ Պարսկական սահմանում ռուսական և քիւրդ աւազակախմբի միջև ընդհարում եղաւ։ Սերբերը մաքրեցին Զեմլինը։ Չեռնօգորցիները վերցրին Պրաչու, որ Սարաեվօյից 2 կիլօմետր հեռու է։ Վիրաւորվեց սերբիական գահաժառանգ Գէօրգին։ Ճապօնացիները մի շարք յաղթութիւններ տարան գերմանացիների վրա։

11-ին.—Ռուսները գրաւեցին Եարօսլաւը։ Գերմանացիները խորտակեցին անգլիական «Աբուկիր», «Խօգ» և «Կրեսսի» յածանաւերը։ Ճապօնացիները ափ իջան Ցինդաօյից դէպի հիւսիս։ Աւստրիացիների և սերբերի միջև կատաղի կռիւներ են։

12-ին.—Ռուսները գրաւեցին Ստարօյէ-Մեստօ, Պրժեվօրսկ և Լանցուտ։ Տօրնի և Կալիշի միջև գերմանացիները ամրացան։ Ֆրանսիայում Էնի վրա շարունակվում է ճակատամարտը։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

—o—

ՔԱՂԱՔԱԳԼՈՒԽՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

Մենք յայտնեցինք, որ Թիֆլիսում սեպտեմբերի 12-ին բացվեց Կովկասի 17 քաղաքների քաղաքագլուխների համագումարը, նախագահութեամբ Զունկովսկիի։

Սեպտեմբերի 14-ին համագումարը աւարտեց իր զբաղմունքները։ Նրա նպատակն էր կազմակերպել վիրաւորներին խնամելու գործը։ Այդ նպատակը աւելի լաւ իրագործելու համար նա որոշեց կազմել կովկասեան քաղաքների դաշնակցութիւն, որ կը համարվի համառուսական քաղաքային դաշնակցութեան ճիւղը։ Կովկասեան քաղաքների դաշնակցութիւնը կունենայ իր կենտրոնական բիւրօն՝ Թիֆլիսում. այդ բիւրօյի նախագահ կամ «դաշնակցութեան լիազօր» ընտրվել է Թիֆլիսի քաղաքագլուխ Ալ. Խատիսեանը։

Համագումարը ուղարկել է Կովկասի փոխարքային հետևեալ հեռագիրը. «Ձերդ Պայծառափայլութեան առաջարկութեամբ գումարված կովկասեան երկրի քաղաքների ներկայացուցիչների ժողովը՝ կազմակերպելու համար օգնութիւն վիրաւոր զինւորականներին, մեր ընդհանուր մայր Մեծն Ռուսաստանի պանծալի զաւակներին, խնդրում է Ձեզ արկանել յոտս Թագաւոր Կայսրի կովկասեան քաղաքների ազգաբնակութեան ներկայացուցիչների հաւատարիմ հպատակութեան զգացումները, քաղաքների, որոնք նուիրում են անձնուէր պատրաստակամութեամբ իրանց բոլոր ուժերը Ռուսաստանի պատուի և արժանապատուութեան համար պատերազմող փառապանծ զօրքին օգնութիւն ցոյց տալու սուրբ գործին»։

Սեպտեմբերի 15-ին փոխարքային ներկայացան համագումարի անդամները։

Երէկ, ամսիս 16-ին, տեղի ունեցաւ կովկասեան քաղաքների դաշնակցութեան ներկայացուցիչների առաջին ժողովը։

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԴՈՒՄԱՅՈՒՄ

Երկուշաբթի, սեպտ. 15-ին, երեկոյեան ժամը 8-ին կայացաւ Թիֆլիսի քաղ. դումայի առաջին նիստը ամառային արձակուրդներից յետոյ։

Սկզբում ռուս հոգևորականութիւնը կատարեց մաղթանք ռուսական զօրքին յաղթութիւն շնորհելու համար։

Քաղաքագլուխ Ալ. Խատիսեան, բանալով նիստը, ողջունեց կովկասեան քաղաքների քաղաքագլուխներին, որոնք ներկայ էին մաղթանքին և նիստի բացման։ Ապա նա մի ճառով բացատրեց թէ քաղաքային վարչութիւնը ինչ է արել մինչև այսօր, վերաբերեալ պատերազմի հետ կապված դէպքերին և կարիքներին, (ինչպէս և վիրաւորներին խնամելու համար կատարված պատրաստութիւններին), և ապա առաջարկեց ուղարկել հեռագիր ռուսական զօրքի Գերագոյն հրամանատար Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլայեվիչին, շնորհաւորելով տարած յաղթութիւնները։ Դուման ծափահարութիւններով ընդունեց առաջարկը։

Դրանից յետոյ դուման անցաւ հերթական հարցերի քննութեան։

ՀԱՅՑ. ԿՈՒԼՏ. ԵՒ ԲԱՐԵԳ. ՀԻՄԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՊԱՏԳԱՄԱՒՈՐՆԵՐԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

«Մշակի» երէկվայ համարում (№ 204) մենք տուինք Կ. Հ. Բ. Ընկ. արտակարգ ժողովի նկարագրութիւնը, որի մէջ յայտնված էր, թէ ժողովի զբաղմունքները վերջանալուց յետոյ ցանկութիւն յայտնվեց հեռագիրներ ուղարկել գործող զօրաբանակի Բարձրագոյն Հրամանատարի, ինչպէս և Վեհափառ Հայրապետի անունով։

Ստորև զետեղում ենք այդ հեռագիրների պատճէնները.

I

Գործող զօրաբանակ. Նորին Կայսերական Բարձրութիւն Գերագոյն Զօրահրամանատար Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլայեվիչին։

Կովկասի հայոց կուլտուրական և բարեգործական հիմնարկութիւնների պատգամաւորների համագումարը, սեպտեմբերի 14-ին հաւաքվելով, վիրաւոր զօրականներին և պահեստների ընտանիքներին օգնելու համար հայ ազգաբնակութեան մէջ օգնութեան գործի կազմակերպութեան հարցը քննելու համար, որոշեց «իր ջերմ ցանկութիւնները յայտնել Ձերդ Կայսերական Բարձրութեանը յետագայ յաղթանակներ տանելու հայրենիքի պաշտպանութեան մեծ գործում»։ Այդ որոշումը ընդունվեց «Կեցցէ Ռուսաստանը, կեցցէ Ռուսաստանի պանծալի զօրքը և Գերագոյն Զօրահրամանատարը» ոգևորված աղաղակներով։

Համագումարի պատւաւոր նախագահ՝
Մեսրոպ եպիսկոպոս
Համագումարի ատենապետ՝
Միք. Պապաջանեան

II

Նորին Սրբութիւն Ամենայն Հայոց Կաթողիկոսին։

Հայոց բարեգործական և կուլտուրական ընկերութիւնների պատգամաւորների համագումարը, սեպտեմբերի 14-ին որոշեց հայ ազգաբնակութեան վիրաւոր զօրականներին և պահեստների ընտանիքներին օգնելու գործը միացնել մի տեղ և մեզ յանձնարարեց խնդրելու Ձեր Հովւապետական օրհնութիւնը և Ձերդ Սրբութեան հովանաւորութեան ներքոյ ընդունել այս բարի գործը։

Կատարելով համագումարի յանձնարարութիւնը, խոնարհաբար խնդրում ենք Ձերդ Սրբութեան ընդունել համագումարին մասնակցողների որդիական անկեղծ զգացումները։

Համագումարի պատւաւոր նախագահ՝
Մեսրոպ եպիսկոպոս
Համագումարի ատենապետ՝
Միք. Պապաջանեան

ԱԿՆԱՐԿՆԵՐ

III

Ինտելիգենցիա

Խօսելով հայ հասարակութեան երկու խոշոր խաւերի մտաւոր բարոյական դրութեան մասին, անցնենք մեր մտաւորականութեանը, այլ խօսքով հայ ինտելիգենցիային։

Ի՞նչ է ինտելիգենցիան։

Ինտելիգենցիա ասելով մենք հասկանում ենք մտաւորականութեան այն համախմբակցութիւնը, որը արտայայտիչը լինելով իր միջավայրի ժամանակակից մտածողութեան՝ վերամշակում է իր միջավայրի հասկացողութիւնները, գունաւորելով այն իր շրջանի տեսակէտներով ու պահանջներով։ Ինտելիգենցիայի միտքը պայմանաւորվում է նրանով, որ կուլտուրական հողի վրա գործում է հասարակական կեանքի կազմակերպման համար, հիմք ունենալով ճշմարտութեան և գեղեցկի սկզբունքները։

Այսպէս ուրեմն՝ ստեղծագործութիւնն ու վերամշակութիւնն է, որ պէտք է զբաղեցնի մտաւորականին։ Նա հասարակական ասպարէզում պիտի հանդէս գայ ոչ միայն իբրև զարգացած, պատրաստված անհատ, այլ և իբրև քաղաքացի կենսական ջիղ ունեցող, տոգորված հասարակական կեանքի առաջխաղացման, զարգացման գաղափարներով։

Զարգացման և պատրաստութեան տէր անձնաւորութիւնը երբ քարացման և անշարժութեան մէջ կծկվում է իր պատեանի մէջ և կամ ասպարէզում գործում անձնական՝ նեղ շարժառիթներից մղված, այդպիսին մտաւորական կոչվելու և ոչ մի բարոյական իրաւունք չունի։

Իսկական մտաւորական համարվում է այն համախմբակցութիւնը կամ անհատը, որը ստեղծագործական հողի վրա թափ և ոյժ է տալիս նոր գաղափարներին, վերամշակման ենթարկում հինը և ձգտում սահմանաւորման մէջ նոր քաղաքակրթութեան, ինչպէս և կուլտուրական նոր կազմի։ Եւ այս հողի վրա աներկբայ գործում է այն միտքը, թէ պէտք է հասարակական կեանքում կիրառել արդարութեան և ճշմարտութեան սկզբունքները։

Մօտենանք այս տեսակէտով հայ մտաւորականութեանը։ Եթէ մենք վերլուծութեան ենթարկենք մեր հասարակական կեանքի ողջ կառուցւածքը, կը տեսնենք, որ նա ցաւոտ և բացասական կողմերի շարան ունի իր մէջ, և հայ մտաւորականութիւնը գործունէութեան լայն ասպարէզ, ինչպէս և կատարելիք խոշոր դեր ունի։

Տգէտ ու խաւար է մեր գաւառական իրականութիւնը, կանգնած կուլտուրականութեան պրիմիտիվ աստիճանի վրա։ Անկազմակերպ և անկանոն են մեր հասարակական գործերը, ենթարկված կազմալուծման, քայքայման, լայն հիմնաւորումն չը կայ մեր կուլտուրական ձեռնարկութիւններ մէջ, անսկզբունք և երերուն է հայ կրթական հիմնարկութիւնների ընդհանուր վիճակը։ Մեր հասարակական կեանքի որ կողմին էլ մօտենալու լինենք, նա ցաւոտ կողմեր ունի, խնամքի ու հոգածութեան է կարօտ։ Սակայն ինչ է անում հայ մտաւորականութիւնը այս բոլորի հանդէպ, ինչ մտքեր են զբաղեցնում նրան։

Ընդհանուր առմամբ նեղ եսասիրական է մեր մտաւորականութեան գործունէութեան շրջանակը, այն մտաւորականութեան, որը կոչված է հասարակութեան ղեկավարն ու առաջնորդը լինելու, նրա մտածողութեան ու ձգտումների արտայայտիչը լինելու։ Հասարակական լայն գործունէութեան ջիղ պակասում է մեր կեանքում։

Անձնական և յաճախ խմբակցական նեղ բնոյթ կրող շահերն են, որ բաղխում են ասպարէզում զայրոյթով ու ցասումով լի և հանդչում յանկարծ՝ նորից բորբոքվելու նկատումներով։ Իւրաքանչիւր դէպքում նըկատվում է քմահաճոյքի ներկայութիւն և այն էլ քօղարկված՝ իրաւունքի, օրէնքի դիմակով։ Մեր մէջ խօսում է գլխաւորապէս կիրքը անզուսպ տենչերով, որը գալիս մթագնում է գաղափարային և սկզբունքային խնդիրները, ամքցնելով ու խեղդելով նուիրականն ու գեղեցիկը։

Մտաւորականութիւնը չը պէտք է առօրեա մանրութիւններով տարվի. նրա միտքը չը պէտք է զբաղվի ինտրիգների, նախանձի և անմաքուր միջոցների յոգնեցուցիչ կռւի մէջ։ Այդ դէպքում նա նսեմացնում է իր կոչումը, չքացնում վեհ գաղափարների հմայքը և վերջապէս կորցնում քաղաքացիական առաքինութիւնների պսակը։ Նա դիրքով պէտք է որ շատ բարձր կանգնած լինի, իր մտածողութեամբ կարողանայ թափանցել շրջապատի հոգին, կարողանայ զգալ, ամփոփել այն բոլոր մտքերն ու գաղափարները, որոնք թաքնված են իր միջավայրում, որ տանջում յուզում են ամենքին և որի իրականացումով հասարակական հոգու և էութեան բաւարարումն է կատարվում։

Սակայն հայ իրականութիւնը իր մտաւոր բարոյական դրութեան արտայայտման մէջ աւելի քան յուսահատեցուցիչ կողմեր ունի։ Նա կեանքի պահանջների համապատասխան ինտելիգենցիա կարծէք չէ արտադրել։ Նա չունի գաղափարական նոր ասպարէզ, դաստիարակված ուժեղ մտքեր, նա զուրկ էր պահանջները, մտքերը, զգացումներն ու ապրումները, մի խօսքով ողջ կեանքը ամփոփող, արտայայտող գործօններից։ Կամ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Հացահատիկի բերքը Ղարաբաղում

Շուշի, 8 սեպտեմբերի

1913—14 թ. թ. ձմեռը Ղարաբաղում անցկացաւ մեղմ, առանց ձիւնի, բքերի փոթորիկների և սառնամանիքների։ Գարուն սկսվեց անժամանակ, ծառերը ծաղկեցին և բողբոջներ արձակեցին, բայց եղանակները փոխվեցին, սկսեց խիստ սառնամանիք, փաթթիլներ, ապա տեղաց խիստ ձիւն։ Վնասը բաւականին զգալի էր։ Ցրտահար եղան կանաչները, ծառերի ծաղիկները և մրգատու ծառերը։ Գարունն անցաւ խիստ անձրևային, հացաբոյսերը փտավեցին, փըտեցին, իսկ անձրևների հետ միասին բարձրացան և վայրենի կանաչները և խեղդեցին նրանց ու թոյլ չը տուին առատ պտուղ տալու։

Ամառը յունիս ամսից սկսած բաւական երաշտ էր, հունձը ցանկալի հետևանքը չունեցաւ, թէև կար հասկ, բայց մեծ մասը առանց պտղի, անձրևները թոյլ չէին տուել հատիկները աճելու և զարգանալու։ Պտուղ ստացվեց միջին քանակութեամբ։

Եղանակների վատութեան և անձրևների պատճառով հունձը Ղարաբաղում բաւական ուշացաւ, իսկ կալ ու կասը աւելի ևս յետաձգվեց, որովհետև օգոստոս ամիսն անցկացաւ անձրևներով և մառախուղներով։ Այսօր իսկ կալ ու կասը չի վերջացած, մինչ պէտք է վար ու ցանքն սկսեն։ Պետ

—

Սուքիաս արքեպիսկոպոսի կտակը

Վաղարշապատ, 12 սեպտեմբ.

Այսօր առաւօտեան իր մահկանացուն կընքեց Մայր-Աթոռի աւագ միաբան՝ Սուքիաս արքեպիսկոպոս Պարզեանը 77 տարեկան հասակում։ Հանգուցեալը բառիս բուն նշանակութեամբ հոգևորական էր իր եկեղեցասիրութեամբ, կարգապահութեամբ և համեստութեամբ։ Իր ունեցած գումարը, որը, ինչպէս իմացանք, հասնում է 70,000 ր., կտակել է Գէորգեան ճեմարանին և այլ բարեգործական հաստատութիւններին։ Կտակը պահվում է սինոդի գանձարանում։

Վ. ք. Աղազարեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

◆ Մեզ յայտնում են, որ մի խումբ կոշկակար արհեստաւորներ, տեսնելով որ ազգային մեծ վիպասան Րաֆֆիի գերեզմանը անխնամ վիճակի մէջ է, նախ մաքրել են նրա վրա մատիտով և ածուխով գրված բազմաթիւ գրութիւնները և ապա որոշել են իրանց մէջ հանգանակութիւն բանալ մեծ վիպասանի գերեզմանի շուրջը երկաթեայ ցանկապատ քաշելու։

◆ Ինչպէս յայտնի է, հոկտեմբերի 3-ին լրանում է Լերմոնտովի ծննդեան 100-ամեակը։ Հայոց Դրամատիկ. Ընկ. վարչութիւնը որոշել է այդ օրը ներկայացնել բանաստեղծի «Դիմակահանդէս» պիէսը։ Ներկայացումից առաջ Մինաս Բերբերեան խօսելու է Լերմոնտովի գրական արժանիքների մասին։

◆ Այսօր, Ժողովրդական Տանը գործող Հայ Դրամատիկ Խմբակցութիւնը սեզոնի բացման առիթով ներկայացնելու է Ժողովրդական Տան բեմի վրա առաջին անգամ Շիրվանզադէի «Աւերակների վրա» դրաման։

◆ Շաբաթ, սեպտեմբերի 12-ին, «Պալաս-Օտէլ» հիւրանոցում ընկերական ճաշկերոյթ կայացաւ քաղաքագլուխների համագումարին եկած քաղաքագլուխների և Կովկասի քաղաքների ներկայացուցիչների պատուին։ Ճաշկերոյթին ներկայ էին 40 մարդ։ Ճաշկերոյթը անցաւ ուրախ։ Արտասանվեցին բազմաթիւ ճառեր։

◆ Քաղ. վարչութիւնը որոշել է երկշաբաթեայ դասընթացքներ բանալ գթութեան քոյրեր պատրաստելու համար, որպէսզի վիրաւորների համար պատրաստած քաղաքային հիւանդանոցներում ծառայեն։

◆ Հիւանդանոցներում ծառայելու համար քաղ. վարչութիւնը որոշել է հրաւիրել 100 բժիշկ, 600 ֆելդշէր և գթութեան քոյրեր և 600 հիւանդապահներ։

◆ Թիֆլիսի նահանգի ազնուականութեան կոմիտէտը դիմել է կովկասեան կոմիտէտին, խնդրելով իր կարգադրութեանը յանձնել 10 վագոն՝ Գոմի կայարանից ցորեն տեղափոխելու Նաւթլուղ կայարանը, Իօրի հովտի ազգաբնակութեան կարիքների համար։ Ինչպէս յայտնի է, Իօրի գետի հովտում, չոր ձմրան և դաշտային մկների պատճառով, հացի բերքը շատ վատ է և ազգաբնակութիւնը հաց գնելու համար ստիպված է ուրիշ շրջանների դիմել։ Ազնուականների կոմիտէտը տեղեկացել է, որ իր միջնորդութիւնը յարգված է։

◆ Այս օրերս քաղաքագլուխ Ալ. Խատիսեան՝ քաղաքային կենտրոնական կոմիտէտի օգտին մի դասախօսութիւն է կարդալու հետևեալ թեմայով. «Պատերազմը, նրա զոհերը և հերոսները»։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐ

Թիֆլիս, 16 սեպտ.

Կովկ. Հայոց Բարեգ. Ընկերութեան հիւանդանոցում ամբողջ պատերազմի ընթացքում իրանց հաշւին պահելու են հիւանդներ նաև հետևեալ անձինք.

Մ. Մ. Արեանց 3 հիւանդ, Մ. Ի. Դոլուխանեան 2 հիւանդ, Ա. Ի. Ատովմեան և իր ընտանիքը մի հիւանդ։

Խորհուրդ

—

Սուրամ, 12 սեպտ.

Շնորհակալութիւն եմ յայտնում սուրամեցի Յովհ. Աւետեանցին, որը տեղիս ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու երկաթէ թիթեղով ծածկած տանիքը ներկել տուեց իւղաներկով՝ ծախսելով 100 ր., ինչպէս և Թիֆլիսեցի Կատինկա Տէրտէրեանին, որը նուիրեց յիշեալ եկեղեցուն մի գորգ՝ արժողութեամբ 30 րուբլի։

Գործակալ Սուրամի՝
Յովսէփ ա. քահ. Աւետեան

ՀԱՅ ԿԵԱՆՔԸ ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

ՆԱՄԱԿ ՀՆԴԿԱՍՏԱՆԻՑ

Ռանգուն, 21/3 յուլիսի

Թեմիս առաջն. խորհրդարանի պատուէրի համաձայն, Պարսկա-Հնդկաստանի թեմի բաժանման առիթով, տեղս՝ ամսիս 4/17-ին՝ հայոց եկեղեցում հասարակական ժողով կայացաւ։

Ռանգունի հայ հասարակութիւնը, թեմիս բաժանման մասին երկար խորհրդակցելուց յետոյ, եկաւ այն եզրակացութեան, որ իրանք համաձայն են Վեհափառի առաջարկութեանն, բայց միևնոյն ժամանակ Հընդկաստանում և Ջաւայում նոյնպէս կարիք է զգացվում ունենալ առաջն. փոխանորդի՝ Ամենափրկչեան վանքի իշխանութեան ներքոյ։ Փոխանորդարանը կը լինի Կալկաթայում։

Առաջն. փոխանորդ ունենալու անհրաժեշտութիւնը լինում է նրանում, որ յիշեալ փոխանորդը ի մօտոյ իր բոլոր ուժերը պէտք է նուիրէ հնդկահայերի ազգային-բարեգործական հաստատութիւնների հաստատման, բոլոր քաղաքների հայ համայնքի կապակցման, բարգաւաճման և յառաջադիմութեան և, որ գլխաւորն է, հայ լեզուի կրթական մեծ և կարևոր գործին զարկ տալու, որովհետև տեղիս հայերը հետզհետէ կորստաբեր հետևանքների են հասնում՝ մոռանալով իրանց մայրենի լեզուն, խորթանալով հայ եկեղեցուց և մի խօսքով այլասերվելով լափող հոսանքից, ի վնաս և ի քայքայումն մեր ազգի և եկեղեցու։

Հայ մանուկն որ աչք է բանում, յանձնվում է օտարի խնամքին, և անգլիական լեզուն լինում է իր բնական, աւելի ընտանի, քան իր մայրենի բարբառը, որով և նա մոռանում է իր ազգային պատմական անցեալը և Մեսրոպեան գիրն ու գրականութիւնը, խորթանում է իր եկեղեցուց, յարում է օտար եկեղեցու և այդպիսով հետզհետէ Հնդկաստանի հայ համայնքը այլասերվում, նուաղում և անհետ կորչում է։

Հնդկաստանը բաւականաչափ հեռու է գտնվում Պարսկաստանի առաջնորդանիստ Նոր-Ջուղայից, հետևաբար թեմիս առաջնորդին հնարաւոր չի լինում նուիրվելու նաև տեղիս ազգային և կրթական գործերին, այնպէս որ առաջն. փոխանորդի ներկայութիւնը Հնդկաստանում ևս աւելի անհրաժեշտ է։

Հնդկաստանի, Բրմանստանի և Ջաւայի առաջն. փոխանորդը պէտք է հմուտ լինի նաև անգլիական լեզուին և շարունակ շրջի ու այցելի իր խնամքին յանձնված բոլոր քաղաքները, այն տեղերում քարոզելու և ազգային գործերին նուիրվելու և պայծառազարդելու, պէտք է հիմնէ ազգային երկսեռ դպրոցներ, յորդորէ ու գրաւէ նոր սերնդին դէպի հայ եկեղեցին և լուսաւորչական կրօնը և փրկէ նրան ազգամոռացութեան չեմքից։

Աւելորդ չենք համարում յիշել նաև, որ եթէ Նոր-Ջուղայեցիների այս կողմերը գալը դադարի, շատ շուտով այստեղի հայութիւնը կանհետանայ, որովհետև այստեղ ծնված ու սնված նոր սերունդը ոչ մի բառ անգամ տեղեակ չէ լինում իր մայրենի լեզուից, չէ յաճախում իր մայր եկեղեցին և հետևաբար խորթանում ու օտարանում է հայութիւնից։ Այս է պատճառը, որ կամաց-կամաց Հնդկաստանի կրթական հաստատութիւնները կորցնում են իրանց նշանակութիւնը և հետզհետէ փակման դատապարտվում։ Օրինակ՝ Սէյդաբադի, Չինչրայի, Պինանգի և Մանդլէի եկեղեցիները։

Ահա այս է տեղիս հասարակական ժողովի խորհրդակցական եզրակացութիւնը։

Այս մասին գրվել է նաև Վեհափառ Կաթողիկոսին, թեմիս առաջն. խորհրդարանին, Կալկաթայի, Ջաւայի, Սինկափուրի, Մադրասի, Դաւայի և Բոմբէյի եկեղեցու պատուարժան կառավարիչներին։

Ի դիմաց Ռանգունի հայոց եկեղեցու վարչութեան՝
Կառավարիչ-երէցփոխ՝ Եսայի Ն. Մանուկ.
Ատենակալ կառավարչաց՝
Սիմէօն Տէր-Անդրէասեան

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿՆԵՐ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

I

Թաւրիզ, 10 սեպտեմբերի

Ուրմիայում տիրում է, առաւելապէս հայերի մէջ հարկաւ, խուճապ և տագնապ։ Ենթադրելով որ ռուսները բազմաթիւ չեն այնտեղ ապահովութեան համար, և միևնոյն ժամանակ երկիւղ կրելով թիւրք կառավարութեան և քիւրդ հրոսակախմբերի հաւանական խլրտումներից, որոնք մի գուցէ խուժեն սահմաններից ներս, ուրմիացի հայերը, մանաւանդ պաշտօնեայ և վաճառական դասի հայերը, իրանց ընտանիքները ուղարկեցին Թաւրիզ և Կովկաս։ Այն լուրը, թէ բանկերն իրանց փողերը և այլ փոխադրել են Թաւրիզ, աւելի զարկ է տուել մեր հայերի փախուստ տալուն. Թէպէտ մինչև հիմա ոչինչ չի կատարվել Ուրմիայում, գուցէ և ոչինչ չը լինի. միայն խելացի հայերն են, որ շտապում են իրանց կեանքն ազատել երևակայական պատահականութիւնից։

Շուջա-ուդ-Դովլէի անկումից յետոյ նրա ազգական և Ուրմիայի դատաւոր Էթիմադ-ուդ-Դովլէի անկումն ևս անխուսափելի էր, որի դէմ դժգոհութիւնները լայն ծաւալ էին ստացել։

Նորընտիր փոխ-նահանգապետ Սարդար Բաշիդ ընդունեց դիւանագիտական մարմնին և փոխադարձաբար կատարեց իր այցելութիւնները։ Թեմակալ Մելիք-Թանգեան շնորհաւորեց իր այցելութեամբ. հէնց նոյն օրն և եթ Սարդարը փոխ-այցելութիւն տուեց հայոց առաջնորդին, և երկուստեք փոխանակվեցին սիրալիր խօսակցութիւններ։ Փոխ-նահանգապետը շատ լաւ է ճանաչում հայերին և դէպի հայերս լաւ է տրամադրված։

Անգործութիւն, տնտեսական տագնապ, առևտուրների բացարձակ անկումն է Թաւրիզում. մնանկութիւնները պարսիկ վաճառականների շրջանում օրը-օրին երևան են գալիս. և եթէ երկար տևէ ներկայի վատթար կացութիւնը համաեւրոպական աշխարհաւեր պատերազմների հետևանքով, կեանքի պայմաններն անտանելի պէտք է դառնան։

Հայկազուն

II

Սալմաստ, 5 օգոստոսի

Օգոստոսի 3-ին, կիրակի օրը, Հաւթվան գիւղում ընդհանուր Սալմաստի հայերը մաղթանք կատարել տուեցին՝ ռուսաց զօրքի և սրի աջողութեան համար։ Ներկայ էին ռուսական զօրքի ներկայացուցիչները։

Պատարագի ժամանակ խօսեց պատարագիչ քահանան, մաղթելով աւելի ևս ույժ ռուս սրին և զինուորին։

Պատարագից յետոյ եկեղեցու բակում հազարից աւելի աղօթողների ներկայութեամբ կատարվեց մաղթանք. յետոյ հայերէն խօսեց Ա. Գուլոյեանը բացատրելով հասարակութեանը պատերազմի միտքը։ Նրանից յետոյ աւելի զգացված ռուսերէն խօսեց Մեսրոպ Մելիք-Յակոբեանը, նկարագրելով հայոց անկեղծ յարաբերութիւնները ռուսների հետ և Ռուսաստանի մշտական օգնութիւնը հայերիս։ Ի վերջոյ խօսեց ռուս գնդապետը, ասելով որ Ռուսաստանը միշտ և ամենուրեք պաշտպանել է ճնշվածներին. նա այժմ չի մոռանայ դարերով ճնշված հայերին։ Ուռաների տակ հասարակութիւնը ձեռքի վրա բարձրացրեց գնդապետին։ Տեսարանը շատ հիանալի էր, դարերով մահմեդական լծի տակ ճնշված հայ ժողովուրդը, այդ օր տեսնելով այդպիսի մի վերաբերմունք դէպի հայերս Ռուսաստանի ներկայացուցիչների կողմից, չէր կարողանում արտայայտել իր ուրախութեան չափը. շատերի աչքերից ուրախութեան արտասուքներ էին հոսում։

Ժողովուրդը ցրվեց շատ լաւ տպաւորութեան տակ։

Մաղթանքից յետոյ ռուս զինուորական ներկայացուցիչներին հիւրասիրեցին ճաշով։

Սեդրակ Առաքելեան

Բ. ԴՐԱՆ ՆՕՏԱՆ ՄԵԾ ՊԵՏՈՒԹԵԱՆՑ ԴԵՍՊԱՆՆԵՐՈՒՆ

(Կապիտիւլասիոններու վերացման առիթով)

—

Առևտուրի համար Արևելք եկող օտարականներուն ենթարկուելիք տրամադրութիւնները ժամանակին յատկապէս հաղորդուած էին օսմ. կառավարութեան կողմէ իբր ապացոյց եւրոպացւոց հանդէպ սնուցուած բարեկամական զգացմանց։

Ինքնակամ յօժարութիւնով Բ. Դրան կողմէ ընդունուած այս տրամադրութիւնները վերջ ի վերջոյ առանձնաշնորհման ձևով մեկնուեցան և կարգ մը գործողութիւններով ընդլայնուեցան ու ամրապնդուեցան և անուանուեցան «հնաւանդ դաշնագիրներ»։ Բայց վերջին դարու իրաւագիտական սկզբունքներուն և վեհապետական իրաւունքներու հիմանց բոլորովին հակառակ այդ առանձնաշնորհումները՝ մէկ կողմէ կայսերական կառավարութեան առաջդիմութեանն ու զարգացմանը արգելք կըլլային, և միւս կողմէ օտար պետութեանց հետ ունեցած յարաբերութեանց մէջ կարգ մը թիւրիմացութիւններ ստեղծելով՝ յարաբերութեանց սերտ ու լաւագոյն ընթացք մը ստանալուն արգելք կըլլային։ Օսմ. կառավարութիւնը Գիւլհանէի խաթթը հիմունքով 1255-էն ի վեր վերածնուած և ամեն արգելքի յաղթելով առաջացած է դէպի բարեկարգութիւն։ Օսմ. պետութիւնը, քաղաքակիրթ Եւրոպայի ընտանիքին մէջ՝ իր արժանի դիրքը գրաւելու համար, իրաւաբանական նորագոյն սկզբունքներն ընդունած և չէ դադրած այն ծրագրէն, որ հիմնուած է նոյն սկզբունքներուն վրայ։

Սահմանադրական վարչութեան հիմնուիլը ապացոյց է թէ՝ վերածնունդի համար օսմ. կառավարութեան ի գործ դրած ջանքերը յաջողութեամբ պսակուած են։ Այսու հանդերձ վեհապետական իրաւանց կարևորագոյն մասը կազմող դատական իրաւունքին՝ կապիտիւլասիոններու համաձայն՝ օտարները կը մասնակցին և շատ մը օրէնքներ օտարներու նկատմամբ չէին գործադրուեր և այսպիսով պետութեան օրէնսդրական իրաւունքը կը կրճատուէր։ Երկրին խաղաղութիւնը վրդովող ունէ ոճրագործ, լոկ օտարահպատակ ըլլալուն պատճառով, հետապընդումէ ազատ կը մնար և կամ շարք մը ձևակերպութեանց համար հասարակաց իրաւունքը կոտնահարուէր։ Միևնոյն պայմանագրութենէն բխող վէճի մը լուծման և վճռումին իրաւասութիւնները կը զանազանուէին և կը բազմանային պայմանագրողներու հպատակութեան համեմատ։ Այս բոլոր բացառիկ պայմանները անանցանելի պատուար մը կը քաշէին երկրին արդարադատութեան ու առաջդիմութեան համար եղած բոլոր ձեռնարկներուն դէմ։ Դարձեալ կապիտիւլասիոններու բերմամբ օտարահպատակները տուրքէ զերծ են, և առիկա Բ. Դուռը անկարողութեան կը մատնէ թէ բարեկարգութեանց համար անհրաժեշտ եղող դրամը հայթայթելու և թէ անոնց փոխառութեանց հասարակ պէտքերը հոգալու համար։ Այսպիսով ուղղակի տուրքերը կաւելնան, օսմ. հպատակները կը քայքայուին և անուղղակի տուրքերը անհնար կըլլայ աւելցնել։ Օտարականները ամեն ապահովութիւն և առանձնաշնորհում կը վայելեն և նուազ հարկով վաճառականութիւն կընեն, ինչ որ անհանդուրժելի անարդարութիւն մըն է և վնասաբեր պետութեան անկախութեանն ու հեղինակութեանը։

Այս բոլոր արգելքներուն մէջ օսմ. կառավարութիւնը հետամտեցաւ և շարունակեց իր բարենորոգչական ջանքերը, բայց ընդհանուր պատերազմը վրայ հասաւ և տնտեսական տագնապը սաստկանալով դըժուարութիւններ ստեղծուեցան և ցարդ սկսուած ու սկսուելիք բարենորոգումները չիրագործուելու վտանգին տակ դրին։ Օսմ. կառավարութեան փրկութիւնը բարեկարգութեանց ու վերանորոգմանց վայրկեան մը առաջ աւարտելուն մէջ կայանալուն վստահ է Բ. Դուռը։ Վստահ է նաև թէ՝ այս ուղղութեամբ իր առնելիք քայլերը պետութեանց քաջալերութեանը պիտի արժանանան։

Այս վստահութեամբ կը ջնջէ պետութիւնը առաջդիմելէ արգիլող կապիտիւլասիոնները, որ տանկալ մըն էին, կը ջնջուին նաև բոլոր բացառիկ արտօնութիւններն ու իրաւունքները 1914 թ. հոկտ. 1-էն սկսեալ, և կորոշէ ընդունիլ պետութեանց հետ ունեցած իր յարաբերութեան համար միջազգային իրաւանց սկզբունքները։ Օսմ. կառավարութեան համար երջանկաբեր դարաշրջան մը բացող և ձեր վսեմութեան անտարակոյս ուրախութիւն առթող այս որոշումը հաղորդելով՝ պարտք կը համարիմ յաւելուլ, թէ Բ. Դուռը կապիտիւլասիոնները ջնջելով՝ օտար պետութիւններէն ոչ մէկուն դէմ հակաբարեկամական միտք մը չի սընուցաներ, այլ միայն օսմ. երկրին բարձրագոյն շահերուն անունով կը շարժի և պատրաստ է միջազգային իրաւանց հիմերուն համաձայն առևտրական դաշնագրութիւններ կնքելու։

Խմբագիր-հրատարակիչ՝
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բժշկ. Բ. Նաւասարդեանի
Հիմնված 1880 թ.
(Տփխիս, Վօրոնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից

«606»-ի եւ «914»-ի ներարկում բժշկական խորհրդակցութեամբ՝ առ. 11—12 ժ.

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վեներական (սիֆիլիս) հիւանդութիւն։
Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—1—2 ժ. ներքին ջղային և երեխայոց հիւանդութ.։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութիւն, կանանց և երեխայոց հիւ.։
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—10—12 ժ. ականջի, կոկորդի, քթի հիւանդութ.։
Մ. Գ. ԱՌԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներական վերաբուժութեան և միզաս. հիւ.։
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. երեխ. հինգշ. և շաբաթ. երեխայոց ներքին և հիւ. և ծաղկահատ.։
Յ. Յ. ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑ—12—1 ժ. երկուշ. չորեքշաբթ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆ—12—1 ժ. մանկաբարձութիւն և կանանց հիւ.։

ԵՐԵԿՈՆԵՐԸ
Մ. Գ. ԱՌԵՏԻՍԵԱՆ—6—7 ժ.։
Յ. Յ. ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑ—6—7 ժ.։
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիում) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
1. 0—82

Ատամնաբուժարան
հիմնված ատամնաբոյժ
Բ. ՀԱՅԿԻՆԱՅԻ
Նախաձեռնութեամբ։ Թիֆլիս, Միխայլովսկի պր. № 76

Բուժարանը բաց է հիւանդների համար օրվայ ու գիշերվայ ամեն ժամին։ Ատամները բուժելու և պլոմբելու համար վճարը սահմանված է ըստ հաստատված սակագնի։
Բուժարանում գործում են 5 բժիշկ-ատամնաբոյժներ, բժ. վիրաբոյժ Բ. Բ. Պիրաղովը (որ ժամանակաւորապէս բացակայ է)։
Բուժարանն ունի կատարելագործված լաբորատորիա արհեստական ատամներ պատրաստելու համար։ Կատարվում են ամեն տեսակ ատամ ոսկե-ռեզինեկան ատամնաշարեր և շտապ վերանորոգումներ 3 ժամվայ ընթացքում։
(օ. մ.) 755. 100—18

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Վ. ՓԱՓԱԶԵԱՆ
(ՀԱՅ ԳՐՈՂԸ)

Վերադարձած լինելով Թիւրքիայից, կամենում է պաշտօն ունենալ հայ դպրոցներում կամ իբրև ՈՒՍՈՒՑԻՉ և կամ իբրև ԴԱՍԱՏՈՒ հետևեալ առարկաների.—Հայոց լեզու, Հայոց պատմութիւն, Հայոց գրականութեան պատմութիւն և Ընդհանուր պատմութիւն։ Պաշտօնավարելու համար որևէ արգելք չունի։
Դիմել նամակով և հաղորդել պայմանները հետևեալ հասցէին.—Нахичевань н./Дону (Донск. обл.) 20-ая Линія, д. № 30. В. Папазьяну.
(Հ. Կ.) 875 8—1

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
„Հայ գրողներ“ Ա. մաս, Բ. հրատարակութիւն։
Գինն է՝ կազմած՝ 2 ր. 25 կ., պօստի ծախքով 2 ր. 50 կ.։
Դիմել՝ Թիֆլիս, «Գուտտենբերգ» գրախանութին։
(օ. մ.) 876. 3—1

Հաշւապահական Կուրսեր Գ. Կ. ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆԻ
(ա. օ) Նիկօլայեվսկայա փող. 36. 863. 25—6

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ ԵՒ ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
ԱՐՏԱՇԷՍ ԱԲԵՂԵԱՆԻ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ
Դասագիրքը

Բաղկացած հետևեալ մասերից. 1) Ընդհանուր նկարագրութիւն (բնական մաս). 2) Ռուսա-Հայաստան. 3) Տաճկա-Հայաստան (Հայկական վեց վիլայէթներ). 4) Պարսկա-Հայաստան. 5) Կիլիկիա. 6) Հին Հայաստան (քաղաք. բաժանումն.)։ Դասագրքի նիւթը և ծաւալը յարմարեցված են դպրոցական ծրագրին։
Դասագրքին կցված են Կովկասի, Տաճկա-Հայաստանի, Հին-Հայաստանի, Կիլիկիայի և այլ քարտէզներ։ Կովկասի և Տաճկա-Հայաստանի քարտէզները գունաւոր են, իւրաքանչիւրը՝ երկու էջի մեծութեամբ։ Դասագրքում կան նաև բազմաթիւ պատկերներ (մօտ հարիւր). Ներկայ աշխատութեան տպագրութեան համար կազմողի տրամադրութեան տակ են դրված եղել Լինչի «Հայաստան» աշխատութեան տեքստի՝ Լօնդօնում պատրաստած կլիշէները։
Դասագրքի գինն է, քարտէզներով միասին, 80 կ., գումարով գնողների համար՝ 60 կ.։ Կովկասի և Տաճկա-Հայաստանի քարտէզներից իւրաքանչիւրն առանձին վաճառքի մէջ արժէ 12 կ.։
Վաճառվում են նաև նոյն կազմողի Աշխարհագրութեան դասագրքերի միւս մասերը (քարտէզներով և պատկերներով). Ա. մաս—60 կ., Բ. մաս—65 կ., Գ. մաս—70 կ.։
Դիմել՝ Թիֆլիս, «Գիր» և միւս գրախանութներին, կամ կազմողին՝ Ներսիսեան դպրոց։
(Հ. Շ.) 868. 5—2

Առևտրի եւ Արդիւնաբերութեան Մինիստր. տնօրէնութեան ներքոյ գտնվող
Տ. Մ. ՓԻԼՕՑԵԱՆԻ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ
ԿՈՒՐՍԵՐՈՒՄ
Թիֆլիս, Միխայլեան պր. 24/2. Տելեֆօն № 976.
Տալիս են երկսեռ անձերին մասնագիտական առևտրական կրթութիւն։
Դասընթացքն աւարտողներին տրվում են ատտեստատներ։

Գործնական զբաղմունքները կատարվում են կուրսերում՝ Լօնդօնի Pitman և Պարիզի Pigier դպրոցների ձևով կազմակերպված Muster-Comptoir-ում։ Նիւթերն առնվում են րէալ կեանքից։ Առարկաներն են. ա) պարտադիր. 1) Հաշւապահութիւն (պարզ, իտալ., գերմ., ֆրանս., ամերիկական, բանկային և գործարանական). 2) Առևտրական թւաբանութիւն. 3) Քաղաքատնտեսութիւն. 4) Օրէնսգիտութիւն (առևտրական իրաւունք, մուրհակի կանոնադրութիւն). 5) Առևտրական թղթակցութիւն. 6) Թւաբանութիւն համրիչի վրա. 7) Վայելչագրութիւն (ամենավատ ձեռքի ուղղումն), արագագրութիւն. բ.) ոչ-պարտադիր. 1) Օտար լեզուներ. 2) Սղագրութիւն. 3) Դակտիլոգրաֆիա (բլինդգոտ և այլ.) և 4) Առևտր. թղթակցութիւն օտար լեզուներով։ Զբաղմունքները կատարվում են և զատ-զատ։ Ունկնդիրների թւի շատութեան պատճառով բացվում է երկրորդ զուգընթաց բաժանմունք, որը մանաւանդ յարմար է օտարաքաղաքացիների համար։ Ունկնդիրների թիւը սահմանափակված է։ Պարապմունքների սկիզբը սեպտեմբերի 15-ին։ Խնդիրների ընդունելութիւնը առ. ժամը 10—12-ը և երեկ. 4—7-ը։ Ծրագիրը և կանոններն ուղարկվում և տրվում են ձրիաբար կուրսերի շէնքում։ Կուրսերը ֆիրմաներին յանձնարարում են հաշւապահներ, օգնականներ և առևտր. այլ ծառայողներ՝ կուրսերի ընթացաւարտներից և իրանց ընդունակութեամբ աչքի ընկնողներից։ (Ընթացիկ տարում կուրսերն ունեցել են 334 ունկնդիր, որոնցից 67 հոգի իգական սեռից)։

Կուրսերի հիմնադիր՝ Տ. ՓԻԼՕՑԵԱՆ
(ա. օ.) 720. 0—31

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный